



Foreign Language Teaching and Research Press (Beijing)

Գրքի հրատարակությունն իրականացվել է
«Օտար լեզուների ուսուցման եւ հետազոտությունների
հրատարակչության» (Պեկին, Չինաստան) աջակցությամբ:



中华思想文化术语
第4卷, 亚美尼亚语版

**Key Concepts in Chinese
Thoughts and Culture**

(Volume 4, Armenian Version)

Translator - Astghik Atabekyan

Stepanakert 2017

**ԶԻՆԱԿԱՆ ՄՏՔԻ
ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹՈՒ
ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՍԿԱՑՈՒՅԹՈՒՆԵՐ**

հատոր 4

Թարգմանիչ՝
Աստղիկ Առաքելյան

ՀՏԴ 1/14: 008

ԳՄԴ 87+71

«Գեղարմ» հանդեսի մատենաշար

Չ 590

Չ 590 Չինական մտքի և մշակույթի հիմնական

հասկացություններ:

Ժատոր 4:

Թարգմ. անգլ.՝ Ա. Աբաբելյան:

Ստեփանակերտ, «Ոգի-Նախիր» հր., 2017, 144 էջ:

Հայ ընթերցողներին է ներկայացվում չինական միտքն ու մշակույթը հատկանշող հիմնական հասկացությունների հմտաշորյա հանրագիտարանի չորրորդ գիրքը:

Հասորաշարն աննախառնակ ու բազմածավալ մի աշխատություն է, որ հետաքրքիր ու օգտակար կարող է լինել ոչ միայն փորձագետների եւ «Երկնատակի» երկրի սիրահարների համար, այլև կզրավի բոլոր նրանց ուշադրությունը, ովքեր ցանկանում են իրենց համար բացահայտել չինական ժառանգության նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ:

Original Chinese-English Text

© Foreign Language Teaching and Research Publishing
Co., Ltd.(FLTRP)

Armenian Translation © Foreign Language Teaching and
Research Publishing Co.,Ltd.

All rights reserved.

ՀՏԴ 1/14: 008

ISBN 978-9939-1-0606-9

ԳՄԴ 87+71

© «Ոգի-Նախիր»/Քարգմանության համար, 2017/

**Չինական մտքի և մշակույթի
հիմնական հասկացություններ.
թարգմանական և հաղորդակցական նախագիծ**

Խորհրդատուներ

Լի Սյուեցին Լին Ուսուն
Ֆլորընս Չյա-ին Յե Զան Ցիջի

Փորձագետների խորհուրդ

Դեկապար

Հան Զեն

Անդամներ

Չառ Ֆուլին, Չեն Ղեջան, Չեն Մինմին, Ֆեն Ջիվեյ, Չան Ջինթայ, Չուանգ Յուի, Չին Յուանփու, Լի Չիանչժուն, Լի Չաոգո, Լոու Յուլի, Մա Չյանֆեյ, Նե Չանշուն, Փան Գունքայ, Վան Բո, Վան Նին, Յե Լան, Յուան Չիսի, Յուան Սինփեյ, Զան Լիվեն, Զան Սիփին, Չեն Շուփու

Չինագետներ

Ալիթո Գայ Սալվատորե, Ռոչեր Թ.Էյմս, Մարթին Զ. Փառլըրս, Վոլֆգանգ Քուրին, Չարի Անդերս Շենսոն, Փոլ Քրուք, Մայքլ Քրուք, Դոն Սթար, Զան Եւ Այվըն Ուոլզ, Չարլզ Ուիլմեն

Գիտական խորհուրդ

Բայ Զենքույ, Ցայ Լիցզյան, Չեն Չայյան, Չեն Շաոմին, Ֆու Զիբին, Գուո Սիառոդոն, Մայքլ Յոար, Յե Շիճյան, Յու Յայ, Յու Զժիֆեն, Յուան Չունյան, Չյա Ղեջուն, Չյան Յայլունգ, Չյան Յաոչու, Լի Յունշան, Լի Չինլին, Լի Սյուեթառ, Լին Ման-Չիու, Լյու Ցին, Լյու Զեն, Լյու Յուհուա, Մեն Սինյուան, Մեյ Յուանյուէ, Մեն Ցիննան, Թորսթըն Փեթթերգ, Զոշուա Մեյսոն

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

Ցյառ Յուն, Ոեն Դայուան, Շեն Վեյսին, Լիներ Շի, Սուն Յիֆեն,
Թաո Լիցին, Թուն Սյանհուա, Վան Գանի, Վան Յուեյմին, Վան
Քեփին, Վան Լիլի, Վանգ Վեյդոն, Վեյ Յուշան, Վեն Յայմին, Վու
Գենյու, Վու Զիձյե, Սիա Զիսյուան, Սյու Մինցյան, Սյու Յանան,
Սյու Ին, Յան Վենբին, Յան Սյուեձյուն, Յան Սյուեդոն, Յան
Իրուեյ, Յույ Վենբաո, Յու Լայմին, Զան Ցզյանմին, Զան Զին,
Զան Սիյին, Զառ Թուն, Զեն Քայ, Զոու Յունֆան, Զու Լյանչի,
Զու Յուան, Զոու Լի:

այմին 爱民

Սիրիո ժողովրդին

Եզրույթը նշանակում է՝ սիրել ու հոգ տանել հասարակ ժողովրդին: Սա ոչ միայն զգացում է, որ կառավարողները պիտի տածեն հասարակ մարդկանց նկատմամբ, այլև կարևոր սկզբունք, որին անհրաժեշտ է հետևել կառավարելու ընթացքում: Հին չինացիները հավատացած էին, որ կառավարողները պետք է օգտվեն հատուկ քաղաքականությունից և միջոցներից, օգտակար լինեն մարդկանց, հնարավորություն տան խաղաղ ապրել ու հանգիստ աշխատել, ազատեն նրանց տառապանքից ու ավելորդ սահմանափակումներից: Սա նախապայման կամ հիմք է, որի շնորհիվ կառավարողները կշահեն ժողովրդի հարգանքը: «Ժողովրդին սիրելը» ոչ միայն կարևոր քաղաքական հասկացություն էր, այլև կիրառվում էր ռազմական ոլորտում և դարձել էր կարևոր սկզբունք, հատկապես այն ժամանակ, երբ պետք էր բանակը պատրաստել պատերազմի: Ըստ այս սկզբունքի՝ թե՛ սեփական, թե՛ թշնամի ժողովորդը պիտի արժանանա հոգածության ու սիրո: Սա չինական մտածողության «նախ՝ ժողովուրդը» և «քարեզործություն/առատաձեռնություն և արդարամտություն» գաղափարների դրսեւում է:

Մեջքերումներ

Չորսի Ուեն արքան հարցրեց Չյան Թայգունին. «Կցանկանայի իմանալ, որո՞նք են ամենակարևոր գործոնները երկրի կառավարման մեջ, որոնք պահպանելու դեպքում կառավարիչը կարժանանա հարգանքի, իսկ ժողովուրդը խաղաղ կապրի»: Չյան Թայգունը պատասխանեց. «Ուղղակի սիրել ժողովրդին»: Ուեն արքան հարցրեց. «Բայց ինչպե՞ս է

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

պետք սիրել ժողովրդին»: Զյան Թայգունն ասաց. «Թույլ տուր, որ մարդիկ շահույթ ստանան ու մի՛ խանգարիր նրանց: Օգնիր մարդկանց հասնել հաջողության ու մի՛ կործանիր: Թույլ տուր ապրել ու մի՛ վնասիր: Օգուտ տուր մարդկանց, և մի՛ օգտվիր նրանցից: Մարդկանց պարզեցիր ուրախություն, և ոչ տառապանք: Եթզանկացրու, բայց մի՛ բարկացրու նրանց»: («Վեց ուսումնակարությունն»)

Հին ժամանակներում մարդիկ բարյացակամ սերը համարում էին հասարակության հիմք, իսկ ուժի չափավոր կիրառումը՝ ճիշտ ճանապարհ: Ըստ պատերազմական սկզբունքների՝ չի կարելի զորակոչ հայտարարել բերքահավաքի շրջանում, կամ երբ ժողովուրդը տառապում է որևէ համաձարակից, որովհետև պետք է սիրել սեփական ժողովրդին: Չի կարելի պատերազմ սկսել, երբ թշնամի պետությունը սգի մեջ է, կամ եթե թշնամի երկրում բնական աղետ է եղել, որովհետև պետք է սիրել նաև թշնամու ժողովրդին: Չի կարելի զորակոչ անել ձմռանը կամ ամռանը, որովհետև պետք է սիրել թե՛ քն, թե՛ թշնամու ժողովրդին: («Գլխավոր հրամանակարի քննախոսությունը պարերազմի մասին»)

այ ժըն ի դե 爱人以德

Սիրիր ժողովրդին՝ համաձայն վարքագծի կանոնների

Ուրիշների հանդեպ սերը պետք է համապատասխանի վարքագծի կանոններին, չպիտի լինի անսկզբունքային, եսասեր կամ հանդուրժող: Այստեղ դե (德) նշանակում է բարոյական վարքագիծ և գիտակցություն և կարող է հիմք ծառայել պատշաճ հասարակական կարգ պահպանելու համար: Ժողովրդի/մարդկանց հանդեպ սերն անձնական զգացմունքային մակարդակի վրա է, մինչդեռ բարոյականությունը հասարակական վարքուրաքի ընդունված կանոնների

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

րի ամբողջություն է: Եթե մարդկանց հանդեպ սիրո հիմքում չինի բարոյականություն, այն կհակադրվի ընդհանուր հասարակական նորմերին և կվնասի թե՛ սիրողի, թե՛ սիրվողի ամբողջականությունը: Եզրույթն արտահայտում է հարգանք բարոյականության, հասարակական կարգի ու հանրային շահի հանդեպ:

Մեջքերումներ.

Ցենցին ասաց. «Առաքինի մարդը հետևում է բարոյականության օրենքներին, երբ սիրում է ուրիշներին, մինչդեռ դատարկ մարդն ամեն ինչ հանդուրժում է՝ հանուն խաղաղության: Իսկ ե՞ս ինչ եմ ուզում: Շատ զոհ կլինեմ, եթե մինչև կյանքին վերջ հետևեմ բարոյականության օրենքներին»: («Ծեսերի զիրքը»)

Առաքինի մարդը հետևում է բարոյականության օրենքներին, երբ սիրում է մարդկանց, և չի խախտում դրանք՝ ելնելով զուտ անձնական պատճառներից: (Չու Ժընհու. «Սոյի և Թաման դինաստիաների սիրավեպը»)

անջու-լեյն 安居乐业

Ապրիր խաղաղությամբ և աշխատիր զոհումակությամբ

Կայուն կյանքով ապրել և ուրախ աշխատել: Անջու (安居) բառացի նշանակում է ապահով տուն, իսկ ավելի լայն իմաստով՝ երջանիկ կյանք ապրել: Լեյն (乐业) նշանակում է վայելել աշխատանքը: Երկու եզրույթը միասին վերաբերում են լավ կառավարման այն ընդհանուր վիճակին, որտեղ գերիշխում է խաղաղությունը, որտեղ բոլորն իրենց տեղում են, բավարպած են աշխատանքից ու զոհ են կյանքից: Սա հասարակ մարդկանց ցանկությունն է, ինչպես նաև՝ լավ կա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ուավարման գերազույն նպատակը: Սա մարդակենարուն քաղաքական նպատակ է, որի հիմնական խնդիրը ժողովրդի ապրուստն ապահովելն է:

Մեջքերուսմներ

Լավ կառավարման բարձրագույն վիճակն այն է, երբ մարդիկ գոհ են իրենց ուտելիքից, հագուստից ու տնային պայմաններից և սիրով պահպանում են հասարակական նորմերը: (*Lovingq*)

Եթե ես երկնքի տակ բոլոր մարդկանց օգնեմ գոյատևել ու զարգանալ, վարել բարեկեցիկ կյանք, ապրել խաղաղ ու աշխատել գոհունակությամբ և երեխաներին մեծացնել ապահով աշխարհում, նրանք մեծ սիրով հավատարության երդում կտան ինձ: (Չուն Չանքուն. «Կառավարման և խառնաշինքի մասին»)

Բայսի 百戏

Բայսի (Բոլոր կատարողական արվեստները)

Սա պատմության մեջ բոլոր կատարողական արվեստների ընդհանուր անվանումն է, ներառյալ՝ մարտարվեստ, մոգություն, կենդանիների ընտելացում, երգ ու պար, ֆարս, լարախաղացություն, դանակ կուլ տալ, կրակի վրա քայլել և այլ ակրոբատիկ համարներ: Արվեստի այս տեսակները բազմազան են թե՛ ձևի, թե՛ բովանդակության տեսանկյունից և կարող են հեշտությամբ ներկայացվել, և միակ չափանիշը հանդիսատեսին զվարճացնելն էր: Այսպիսի ներկայացումները ցուցադրվում են դեռևս Հան ժամանակներում, և քանի որ տարբեր էթնիկական խմբերի մշակույթն ու

արվեստի ձևերը դանդաղ ինտեգրվում էին տեղական առօրյային, կատարողական արվեստն ու ակրոբատիկան խիստ բազմազան դարձավ: *Բայսի* (百戏) եզրույթը բառացի նշանակում է «կատարման կամ ներկայացման հարյուրավոր ձևեր» և ենթադրում է կատարողական արվեստի տարրեր տեսակներ: Հարավային և Հյուսիսային դինաստիաներից հետո որպես բայսի հոնանիշ կիրառվում էր մեկ այլ եզրույթ՝ *սաևյուհ* (散乐): Թան դինաստիայում կատարողական արվեստներն էլ ավելի մեծ տարածում գտան: Սուն դինաստիայում սաբյուե եզրույթը վերաբերում էր հիմնականում երաժշտական ու պարային կատարումներին կամ օպերային, որ ստեղծում էին ուսազ մարդիկ: Սինչժեռ բայսին հիմնականում վերաբերում էր ժողովրդական արտիստների ակրոբատիկ շոուներին: Երբեմն դեկավարներն արգելում էին բայսին կարծելով, որ նաև կատարողական արվեստները վատ ազդեցություն են քողմում հասարակական ավանդույթների վրա: Սակայն հանուն արդարության պետք է նշել, որ բայսին ծնունդ տվեց բարձրաճաշակ երգին ու պարին, ինչպես նաև օպերային ներկայացումներին: Դրա շնորհիվ ակրոբատիկան վերածվեց ոչ շոշափելի մշակութային ժառանգության մի ձևի, որը հարստացրեց մարդկանց մշակութային կյանքը:

Մեջբերում

Յին և Հան դինաստիաներից սկսած՝ ի հայտ եկան ակրոբատիկ շոուների տարրեր տեսակներ և կատարողական արվեստներն մեծ բազմազանություն, որոնք նույնպես առնչություն ունեին բայսի հետ և նաև կոչվում էին սանյուն: (*«Թան դինաստիայի պարմությունը»*)

բյանսայշի 边塞诗

«Սահմանային» պոեզիա

Այս խմբի բանաստեղծությունները պատկերում էին սահմանային տեսարաններ, ինչպես նաև հյուսիսային սահմանի երկայնքով ընթացող կռվի տեսարաններ և այնտեղ հաստատված զինվորների կյանքը: Բանաստեղծությունները նկարագրում էին Մեծ պատից հյուսիս գտնվող գեղատեսիլու շքեղ բնությունը, կատաղի պատերազմական տեսարաններ, կամ սահմանը հսկողների դժվարությունները: Ստեղծագործությունների մի մասը պատկերում էր զինվորների հոգեվարքի տեսարաններ, որի պատճառը երկարատև բաժանումն էր ընտանիքներից և կարոտարադություննը, իսկ որոշ բանաստեղծություններ էլ հայրենասիրության փառաբանումն էին: Որոշ ստեղծագործություններ էլ պատմում էին կանանց մասին, որոնք ձգտում էին վերամիավորվել իրենց ամուսինների ու որդիների հետ: Սահմանային բանաստեղծությունները ցույց էին տալիս բանաստեղծի վերաբերմունքը պատերազմին, նրա մտորումները պատերազմի մասին՝ ընդգծելով խոր հակասությունն անձնական կյանքի արժևորման և պարտքը կատարելու անհրաժեշտության միջև: Ամենայուրիշ «սահմանային» բանաստեղծությունները գրվել են Թան դինաստիայում: Հետագա սերունդների այս ոճի բանաստեղծությունները չեն կարող մրցել Թան դինաստիայում ստեղծված բանաստեղծական նմուշների հզոր արտահայտչականության հետ:

Մեջքերում

Թան դինաստիայի ծաղկման շրջանում գրված բանաստեղծությունները, որոնց յուրաքանչյուր տողում հինգ տա-

ուանշան կա, նմանակում էին Ռուան Զիի, Գուռ Փուի ու Թառ Յուանմինի բանաստեղծական ոճը, մինչդեռ այս ժամանակաշրջանի սահմանային բանատեղծությունների վրա ավելի զգալի էր Բառ Զառյի ու Ու Յունի ազրեցությունը: Թան դինաստիայի բանաստեղծների համար ներշնչանքի աղբյուր էր Վեց դինաստիաների պոեզիան, սակայն նրանք միևնույն ժամանակ ազատվել էին այնպիսի թերություններից, ինչպիսք են երկարաբանություններն ու անկազմակերպվածությունը: Հետևաբար, նրանց բանաստեղծությունները դասական պոեզիայի նմուշներ էին, որոնցից կարող ենք դասեր քաղել: (Ուան Շիշեն. «Ապահով ու խաղաղ կյանքի պարույրյուններ»)

բյառջու-սինհուեյ 标举兴会

Առանձնահատուկ և ինքնաբուխ

Նաև՝ «ինքնաբուխ և առանձնահատուկ»: Բյառջու (标举) ի սկզբանե նշանակում էր «տարբերվել կամ առանձնանալ»: Հետագայում իմաստն ընդլայնվեց, և եզրույթը նաև նշանակում էր «բարձրագույն/լավագույն, յուրահատուկ, հատկանշական և առանձնահատուկ»: *Հուիչ* (惠) նշանակում է «հավաքել/հավաքվել»: *Սիհինիչ* (兴会) եզրույթը վերաբերում է մարդու բուռն ստեղծագործական վիճակին և հարուստ ընկալումներին, որոնք առաջանում են որևէ երևույթից, և բուռն, բնական ներշնչանքից առաջացած հետաքրքրությանն և հմայքին, որոնք ի հայտ են գալիս գրական ստեղծագործություններում: Եզրույթն ամբողջությամբ նշանակում է՝ առանձնահատուկ, ինքնաբուխ ընկալումներ և զգացմունքներ գրական ստեղծագործության մեջ, և լարված հետաքրքրություն ու հմայք, որով օժտված է տվյալ գրական երկը: Սա միաժամանակ գրաքննադատության եզրույթ է և

Զինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

գրական ստեղծագործության ոլորտի հայեցակերպ: Հակադրվելով կեղծ զգացմունքայնությանը՝ եզրույթը ներառում է նաև ինքնարուխության գաղափարը, գրողների տաղանդն ու խանդավառությունը, և ընդգծում է ազատ երևակայությունը, որը հիմնված է բնազդի վրա, և ազատ ստեղծագործմիտքը՝ բուռն ներշնչանքի վիճակում:

Մեջքերումներ

Թե՛ Սյե Լինյունի բանաստեղծությունների ինքնարուխությունն ու առանձնահատուկ բնույթը, թե՛ Յան Յանչիի բանաստեղծությունների խիստ կառուցվածքն ու պարզությունը, որ ներշնչվել են իրենցից առաջ ստեղծագործած բանաստեղծներից, ոգեշնչել են նաև հետազա ժամանակների բանաստեղծներին: («Հարավայի դիմասպիհաներից Սուն դիմասպիհայի պալմություններ»)

Ինքնարուխ և առանձնահատուկ բանաստեղծությունն ինքնարերաբար միաձուլում է մարդու զգացումներն ու բնական միջավայրը: (Վան Ֆուջի. «Միևնույն դիմասպիհայի պոկհայի ժողովածու՝ մեկնարանություններով»)

Մանրամասն ուսումնափրությունը ցույց է տալիս, որ երբ բանաստեղծը ներշնչված է, ստեղծում է սրանչելի գրական երկեր՝ առանց դրա մասին իմանալու: Նման բանաստեղծություններն այսպիսով օրինակ են ծառայում հետազա սերունդների համար: Եթե բանաստեղծի ներքին զգացմունքները փոխազդեցության մեջ են մտնում արտաքին աշխարհի հետ, նա, բնականարար, ձգտում է արտահայտել դրանք: Ահա թե ինչ է նշանակում պոեզիա գրել: (Յե Սիե. «Պոեզիա գրելու նպաւուկները»)

բռ'այ 博爱

Մեծ սեր՝ ի շահ բոլորի

Բռ (博) նշանակում է ընդարձակ, լայն, խև այ բառը (愛) *հուեյ* (惠) բառի հոմանիշն է, որը նշանակում է օգուտ բերել բոլորին: Հին չինացիները հավատում էին, որ մարդկանց խաղաղ ու անվտանգ կյանք ապահովելը հենց հուեյն է: Սերն էլ իր հերթին ժընի (仁) կամ բարյացակամության/բարեգործության արտահայտություն է, որը հիմնված է մարդկային սերտ հարաբերությունների վրա: Եզրույթը հիմնականում առնչվում է «մարդկանց սիրելով և նրանց բարիք բերելով» կառավարելու հասկացության հետ, որը դրսևորվում է համակարգերի, օրենքների, ու քաղաքականության միջոցով, որոնք պիտի առավելագույն գործածվեն: Եզրույթը վերաբերում է նաև հասարակական բարոյականությանն ու անհատական ամբողջականությանը, որը հիմնված է որիշների հետ ներդաշնակ հարաբերությունների, բարյացակամության ու փոխադարձ օգնության վրա:

Մեջքերումներ

Հնում իմաստուն կառավարիչները բացահայտեցին, որ կրթությունը կարող է բարելավել մարդկանց կյանքը, ուստի նրանք պաշտպանում էին մեծ, համապարփակ սիրո գաղափարը, և հետևաբար, ոչ ոք չեր լրում ծնողներին: Նրանք մարդկանց սովորեցնում էին բարոյականության և վարքութարքի կանոններ, և հետևաբար, բոլորն էլ պատշաճ կերպով էին պահում իրենց... («Որդիական բարեկազմության դասական օրինակներ»)

Կառավարչի սկզբունքները հետևյալն են՝ կառավարել ըստ բնության օրենքների՝ առանց չափից դուրս միջամտու-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

թյան, օգտակար լինել հնարավորինս շատ մարդկանց և պաշտոնի համար ընտրել տաղանդավորներին ու ազնիվներին: (Լիու Սյան. «Պալմուքյունների պարփեղ»)

Մարդկանց հանդեպ մեծ սերը հենց բարյացակամությունն է, բարյացակամությամբ ու պատշաճ վարքութաքով ապրելը նշանակում է լինել արդարամիտ, իսկ ըստ բարյացակամության ու արդարամության կանոնների գործելը նշանակում է ապրել պատշաճ կյանքով: Առանց արտաքին միջամտության կատարելության հասնելը նշանակում է ապրել առաքինի կյանքով: (Հան Յու. «Դառյի ժագումը»)

բուջամներչեն 不战而胜

Հաղթիր՝ առանց պատերազմի օգնությանը դիմելու

Ասացվածքը Սուն Ուից է՝ հայտնի ռազմագետ, ըստ որի լավագույն ռազմավարությունն «առանց պատերազմի օգնությանը դիմելու թշնամուն հաղթելն է»: Նա առաջարկում էր երկու միջոց՝ 1. ռազմական հնարքների կիրառում՝ թշնամու ծրագրերը խափանելու համար, 2. դիվանագիտության կիրառում՝ թշնամուն ամբողջությամբ մեկուսացնելու համար: Այսպիսով, հակառակորդը կհայտնվեր անհույս վիճակում ու ստիպված կլիներ հնազանդվել: Սա ռազմավարության համընդգրկուն տեսլական է, որը ներառում է քաղաքականությունը, ուժը և դիվանագիտությունը, և եղել է հաջողակ հրամանատարների մի քանի սերնդի իդեալը: Այս մտածողությունը մինչ օրս էլ գերիշխող դիրք ունի միջազգային հարաբերություններում, «քիզնես պատերազմներում» և այլ ոլորտներում: Հիմքում ընկած է «նախ՝ ստեղծիր իմքդ քեզ, ապա դաշնակիցներ ձեռք քեր» ասացվածքը:

Մեջբերում

Հայրանակը ցանկացած ճակատամարտում ուժ օգտագործելու ամենախնասուն ձևը չէ: Լավագույն ռազմավարությունը հետևյալն է՝ ստիպել, որ թշնամին հանձնվի առանց կովելու: Նախընտրած տարրերակն է՝ խափանել թշնամու ծրագրերը, հաջորդ քայլ՝ դիմել դիվանագիտության օգնությանը, և չստացվելու դեպքում հարձակվել թշնամական ուժերի վրա, իսկ ամենաքիչ ցանկալի տարրերակը թշնամու քաղաքների վրա գրոհելը վերջին տարրերակն է, երբ այլընտրանքներն արդեն սպառվել են: («Պատերազմի արվեստը»)

բու ջան ցայ ուս 不战在我

Չկովելը միայն ու միայն մարդու սեփական որոշումն է

Կովելը կամ չկովելը ոչ թե թշնամու, այլ մարդու անհատական, սեփական որոշումն է: Կովի մեջ մի՛ ներգրավիր թշնամուն, եթե հայրանակը երաշխավորված չէ: Սա հին չինացիների առաջարկած ռազմական գործողությունների սկզբունքն է: «Կովի մեջ թշնամուն չներգրավել» չի նշանակում պասիվ դիրք ընդունել և խուսափել առճակատումից, այլ ենթադրում է խուսափել ուղղակի առճակատումից, երբ իրավիճակը թշնամու օգտին է: Չպետք է շտապել և կամ ուժով ներգրավվել հակամարտության մեջ՝ միայն թշնամու որևէ քայլի արձագանքելու համար: Փոխարենը, կարելի է իրականացնել ամուր պաշտպանություն՝ թշնամուն հյուծելու և նրան դուրս քշելու համար, ինչը թշնամուն կստիպի բացահայտել իր խոցելի կողմերը: Դրանից հետո կարելի է առիթից օգտվել, հարձակվել կամ հակամարված տալ և հարթել ճակատամարտը: Հասկացությունը կարևորում է պատերազմ

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

մղելիս հսկողությունն իր ձեռքը վերցնելը և խորհուրդ է տալիս խուսափել կովից, եթե հաղբանակը երաշխավորված չէ:

Մեջքերումներ.

Հետևաբար, բանիմաց հրամանատարը կարող է մոլորեցնել թշնամուն և չմոլորվել («Պալրերազմի արվեստը»)

Սուն Ուն ասում էր. «Եթե ես չեմ ցանկանում մասնակցել, պաշտպանական դիրք եմ գրավում և թույլ չեմ տալիս, որ թշնամին ինձ ներգրավի կովի մեջ: Այսպիսով, ես կարող եմ ստիպել իմ թշնամուն փոխել հարձակման ուղղությունը»: Հզոր թշնամին կարող է անհնար դարձնել իմ հաղբանակը՝ կամ հետ քաշվելով կամ առաջ գալով: Հենց այդ պատճառով էլ ասում եմ՝ եթե հաղբանակը երաշխավորված չէ, թշնամուն մարտահրավեր չեմ նետում: (Լի Զին. «Պալրասիսանելով Թան դիմասրիհայի կայսր Թայցունին»)

ցանյան 参验

Խաչաձև ստուգում և հաստատում

Եթե ուզում եք իմանալ՝ մարդու գնահատականն ու կարծիքը ճիշտ է, թե ոչ, պետք է հաստատել դա քննման և համեմատության միջոցով: Խաչաձև ստուգման ու հաստատման մեթոդը հաճախ էր հիշատակվում Ցինին նախորդած շրջանում: Հանֆեյցին մանրամասն շարադրել է այս մեթոդը: Նա հավատացած էր, որ ինչ-որ բանի ճիշտ կամ սխալ լինելը հաստատելու համար անհրաժեշտ է համեմատել, ստուգել ու հաստատել իրողությունը տարբեր տեսանկյուններից՝ երկնքից, երկրից, առարկաներից ու մարդ արարածներից: Այս մեթոդը կիրառելիս անհրաժեշտ է կենտրոնանալ գնահատականների ու կարծիքների այրակտիկ ազդեցության վրա:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Ճիշտ են միայն այն գնահատականներն ու կարծիքները, որոնց իրական ազդեցությունն ապացուցված է համեմատության, խաչաձև ստուգման և հաստատման միջոցով։ Հիմարություն է ինչ-որ բան հաստատել կուրորեն, առանց խաչաձև ստուգման ու հաստատման։

Utopia

Թիշտ է, թե սխալ, պետք է որդշվի ըստ նրա, թե արդյո՞ք անունը համապատասխանում է Էությանը կամ Այութին։ Սի-այն խաչաձև ստուգման ու հաստատման միջոցով կարելի է դատել՝ արդյոք մարդու կարծիքները ճիշտ են, թե ոչ։ (*Հան-ֆելցի*)

qwañiħa ɔħ īn ɔħ ċħad lu 仓库实而知礼节

**Եթք ամբարները լիովի են, մարդիկ հետևում են
վարրազծի կանոններին**

Գուանցիի ամբողջական մեջքերումը հետևյալն է. «Եթե ամբարները լիովի են, մարդիկ հետևում են վարվելակերպի պատշաճ կանոններին, իսկ երբ բավականաչափ ուտելիք ու հագուստ կա, մարդիկ գիտեն՝ ինչ է պատիվ ու ամոր»: Այս տեղ «ամբարները» և «ուտելիք ու հագուստը» կյանքի նյութական պայմաններն են, իսկ «վարքութարքի կանոններն» ու «պատիվն ու ամորը»՝ հասարակության հասարակական և բարոյական սկզբունքները, ինչպես նաև համակարգերն ու հոգևոր մշակույթը, որոնք ընկած են նրա հիմքում: Մեջքերումն ընդգծում է նյութական կյանքի ու բարոյականության հարաբերությունը, այն է՝ առաջինը երկրորդի հիմքն է, իսկ բարոյականությունն ու հասարակական նորմերը նյութական զարգացման որոշակի աստիճանի արդյունքն են:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Առանց հիմնական կենսական պայմանների՝ անհնար կլինի պահպանել անգամ լավագույն համակարգերը, և մարդկության բարոյական չափանիշները կմնան ցածր մակարդակում: Բոլոր ժամանակներում կառավարումը պետք է կենտրոնանա, նախ, հասարակության նյութական վիճակը բարելավելու վրա: Սա պետության կառավարման շատ պրակտիկ հասկացություն է:

Մեջքերումներ

Եվ Գուանցին ասաց. «Երբ ցորենի ամբարները լիքն են, մարդիկ հետևում են վարքագծի պատշաճ կանոններին, իսկ երբ բավականաշափ ուտելիք ու հազուստ է լինում, մարդիկ ճանաչում են պատիվ ու ամոր»: Պատշաճ հասարակական նորմերը ծագում են կյանքի բավարար պայմաններից, և անհետանում են, երբ այդ պայմանները բացակայում են: Դա է պատճառը, որ բարձր կարգավիճակ ունեցող մարդիկ հարստանում և պաշտպանում են բարոյական չափանիշները, իսկ սովորական մարդիկ բարոյական նորմերը պահպանում են՝ ըստ իրենց միջոցների: Զկները հավաքվում են այնտեղ, որտեղ ջուրը խորն է: Վայրի կենդանիները հավաքվում են այնտեղ, որտեղ սարերը շատ են: Երբ մարդիկ բարեկեցիկ են, ստեղծվում է կարեկցանքով ու արդարամտությամբ օժտված հասարակություն: (*«Պարսիչի արձանագրություններ»*)

Գուանցին ասում էր. «Երբ ցորենի ամբարները լիքն են, մարդիկ հետևում են վարքագծի պատշաճ կանոններին»: Անիշելի ժամանակներից ի վեր երբնէ չի եղել հաջող կառավարում այն դեպքում, երբ մարդիկ չեն ունեցել ապրուստի բավարար միջոցներ: Բավարար հարստությունն ու հացահատկի պաշարները կենսական նշանակություն ունեն ազգային տնտեսության և մարդկանց ապրելակերպի համար:

Ամեն ինչ հճարավոր է, երբ ցորենի բավարար պաշարներ կան, իսկ զանձարանները լիքն են: Այսպիսի կառավարիչը հաղթանակ կգրանցի հարձակման դեպքում, անխոցելի կի-նի պաշտպանության մեջ և անհարեսի՝ պատերազմում: Ո՞վ չի հպատակվի նման կառավարչի՝ կամ նահանջելու, կամ ներման միջոցով: (Չյա Ի. «Ակումուլյացիան զյուղակնակության մեջ»)

Չանչեն 长城

Մեծ պատը

Մեծ պատը, որը նաև կոչում են «10,000 լի (5000 կիլոմետր) երկարությամբ Մեծ պատ», լիարժեք պաշտպանական համակարգ էր, բաղկացած էր պատերից, պահակադիտանոցներից, ցանկապատված անցումներից ու փարոս-աշտարակներից: Մթա. 3-րդ դարում՝ Չինաստանի միավորումից հետո, Ցին դինաստիան ձգուում էր դեպի հարավ մղել հյուսիսային քոչվոր ցեղերին, որոնք հայտնի էին Սյուննու անունով՝ միջյանց կապելով ու աճրացնելով պաշտպանական պատերի հատվածները, որոնք կառուցվել էին Յան, Չառ և Ցին ֆեոդալական պետություններում և «Պատերազմող պետությունների» ժամանակաշրջանում, որը դեռ նոր էր ավարտվել: 10,000 լի երկարությամբ Մեծ պատը սկսվում էր արևմուտքում՝ Լինքաոյից (այժմյան Սինյան կոմսություն, Գանսու գավառ) մինչև արևելքում Լյաոնուն (այժմյան Լյանին գավառ): Հետագա դինաստիաները, այդ թվում և Արևմտյան և Արևելյան Հան դինաստիաները, Հյուսիսային դինաստիաներն ու Սույ դինաստիան նույնպես հատվածներ ավելացրին Մեծ պատին այն տեղերում, որոնք սահմանակից էին հյուսիսային քոչվոր ցեղերի տարածքներին: Սին դինաստիան վերջին չինական դինաստիան էր, որը մասնակ-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ցեց Մեծ պատի կառուցման հսկայածավալ աշխատանքներին: Հունու և Ուանի կայսրերի քագավորության ժամանակաշրջաններում Մեծ պատը տասնութ անգամ վերակառուցվեց: Մեծ պատի մի մեծ հատված, որ մինչ օրս կանգուն է, մնացել է Սին դինաստիայից: Սինի Մեծ պատը ձգվում է արևմուտքում Զյայու անցումից մինչև արևելքում Շանհայի անցումը, և ընդհանուր երկարությունը կազմում է 8851.8 կմ: Մեծ պատը հին Չինաստանում կառուցված խոշորագույն պաշտպանական միավորն է: Ավելի ուշ «մեծ պատ» կամ «10000 լի երկարությամբ մեծ պատ» եզրույթը հաճախ վկայուում էր մի խումբ մարդկանց, որոնք իրականացնում են երկրի պաշտպանությունը: Եզրույթը նաև չինացիների ազային ամրության ու միասնության խորիրդանիշն է:

Մեծրերումներ

Ապա Ցին դինաստիայի առաջին կայսրը գեներալ Մեն Թյանին ուղարկեց հյուսիս՝ Մեծ պատը կառուցելու և սահմանը հսկելու: Սա Սյուննու ժողովրդին ստիպեց ավելի քան 700 լի հետ քաշվել, և նրանք այլևս չեն համարձակվում գնալ հարավ՝ ձիեր բուծելու: (Չյա Յի. «Չինի թերությունների մասին»)

Քանի որ Թյան Գույը մեռած է, երկրի մեծ պատը քանդված է, իսկ վերնախավը՝ կորած: Ի՞նչ պիտի անենք: (Չեն Չեն. «Շահակա պաշտպանություն»)

չանշեն 暢神

Մտքի ազատ հոսք

Եզրույթը նկարագրում է մտքի մի վիճակ, որին մարդը հասնում է՝ գնահատելով արվեստի որևէ գործ, և այդ ընթաց-

քում նրա ներքին զգացմունքներն ազատորեն ու մեծ ուրախությամբ փոխազդեցության մեջ են մտնում քնության հետ: Եզրույթը մասնավորապես վերաբերում է քնանկարներ և քնանկարային բանաստեղծություններ գնահատելու գեղագիտական փորձին, երբ մարդը կլանվում է քնական տեսարաններով ու պատկերներով: Իր «Բնանկարչության սկզբնավորման մասին» ստեղծագրության մեջ նկարիչ և գեղանկարչության քննադատ Յուն Քինն ընդգծում է, որ քնանկարներ դիտելիս կարելի է գնահատել դրանց փիլիսոփայությունը և հասկանալ, թե ինն ժամանակների իմաստուններն ինչ հաճույք էին ստանում քնապատկերից: Այդ ընթացքում մարդը շեղվում է արտաքին աշխարհից և ամբողջությամբ ազատվում երկրային կյանքից՝ այսպիսով հասնելով թե՛ մարմնի, թե՛ մտքի լիարժեք բավարարման: Եզրույթը ոչ միայն բացահայտում է քնանկարչության, քնանկարային բանաստեղծությունների և քնական գեղեցկության յուրահատուկ գեղագիտական գործառույթը, այլև դրսնորում է ավանդական գրականության և արվեստների՝ քնության և մարդու, մտքի և սրտի ներդաշնակության ծգումները:

Մեջբերում

Հեռավոր անցյալում իմաստունները երևակայության և դիտարկման միջոցով բացահայտել են քնությանը ներհատուկ փիլիսոփայական իմաստությունը. ուրիշ էլ ի՞նչ է ինձ պետք: Մնում է միայն վայելել այն ուրախությունը, երբ միտքն ազատ փոխազդեցության մեջ է մտնում քնանկարի հետ: (Յուն Քին. «Բնանկարչության սկզբնավորման մասին»)

չենժըն 成人

Լիարժեք մարդ

«Լիարժեք մարդ» եզրույթը վերաբերում է կայուն քարոյական ամբողջությամբ օժտված մարդուն, որը նաև տիրապետում է բազմազան հմտությունների, որոնք իին ժամանակներում անհրաժեշտ էին հասարակական կյանքին մասնակցելու համար: Ըստ իին չինացիների՝ «լիարժեք մարդ» եզրույթը ոչ միայն ցույց է տալիս չափահասության տարիքին հասնելը, այլև նշանակում է, որ մարդն ունի կայուն քարոյական նկարագիր և տիրապետում է հմտությունների, որոնք անհրաժեշտ են հասարակությանը հարմարվելու համար: Լիարժեք մարդը պետք է անպայման օժտված լիներ իմաստությամբ, խիզախությամբ ու ինքնատիրապետմամբ, ինչպես նաև ունենար հմտություններ, որոնք անհրաժեշտ են կյանքի բոլոր հարցերը հարթելու համար, որպեսզի խոսքն ու գործը համապատասխանեն բարոյական սկզբունքների ու արդարության պահանջներին:

Մեջքերումներ

Ցիլուն հարցրեց, թե ինչ որակներով պիտի օժտված լինի լիարժեք մարդը: Եվ Կոնֆուցիոն ասաց. «Եթե մարդն օժտված է Ցան Ուչունի իմաստությամբ, հեռու է ընչափացությունից, ինչպես Սեն Գունչուն, օժտված է Բյան Զուանցիի խիզախությամբ և Րան Ցյուի բազմակողմանի հմտություններով, և գաղափար ունի ծեսերի ու երաժշտության մասին, ապա կարող է լիարժեք մարդ համարվել»: Ապա Կոնֆուցիոնը շարունակեց. «Բայց ի՞նչ կարիք կա, որ լիարժեք մարդն օժտված լինի այս բոլոր արժանիքներով»: Եսապաշտության գայթակղությանը հանդիպելիս՝ նա մտարերում է ար-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

դպրության սկզբունքը: Պատրաստ է անհրաժեշտության դեպքում վտանգել կյանքը: Երկար ժամանակ ծանր իրավիճակում հայտնվելիս երբեք չի մոռանում նախկինում տված խոստումները: Կարելի է ասել, որ նման մարդիկ լիարժեք մարդիկ են»: («Չրույցներ և ասույթներ»)

Բարոյականությամբ օժտված լինելու դեպքում մարդը կունենա ուժեղ կամք և գործողությունների վճռականություն: Ուժեղ կամք ունեցող և գործողությունների մեջ վճռական մարդը հեշտությամբ արձագանքում է բոլոր փոփոխություններին: Այսպիսի մարդկանց կարելի է լիարժեք մարդ կոչել: («*Unicidh*»)

չումրեն-ջումն 崇本举末

Հարգիր հիմնականն ու անփոփոխ բող յուրահատուկը

Այս հասկացությունը, ի տարբերություն «հարգիր հիմնականն ու մերժիր յուրահատուկը» հասկացության, առաջացել է Վան Բիի՝ Լաոցիի մեկնաբանությունից: Հիմնարար կամ հիմնականը, այն է՝ Դառն, անձն է ու անանուն, մինչդեռ «յուրահատուկ» բառը վերաբերում է բնական ձևերին ու անուններին: «Հարգիր հիմնականն ու անփոփոխ բող յուրահատուկը» եզրույթը նշանակում է՝ լիակատար իշխանություն տալ Դառյին, որպեսզի էությունն առաջանա ու պահպանի ակտիվությունը: Քաղաքականության մեջ եզրույթը նշանակում է, որ միապետը պիտի կառավարի՝ հիմնվելով Դառյի վրա, և չանի որևէ բան, որը դեմ է բնությանը: Նա պիտի հարգի հիմնականը, որպեսզի մարդիկ վարեն կյանքն ըստ իրենց ներհատուկ օրենքների:

Մեջբերում

Երկնքի տակ ամեն ինչ պահպանելու համար պետք է կառչել Դառյից: Եթե հիմնականը պահպանվի, իսկ յուրահատուկն անփոփոխ մնա, բոլոր շոշափելի (նյութական) իրերը կրարգավաճեն, իսկ անունները կպահպանվեն, չար ու սխալ չի լինի, գեղեցկությունը կհամապատասխանի երկնքի օրենքին, իսկ սնափառությունը կանհետանա: (Վան Բի. «*Lwingqih ծանոթագրություններ*»)

չունիքն-սիմո 崇本息末

Հարգիր հիմնականն ու մերժիր յուրահատուկը

Եզրույթն առնչվում է հիմնականի ու յուրահատուկի հարաբերությանը: Լաոցիին մեկնաբանելիս Վան Բին առաջ քաշեց «հիմնականը հարգելու և յուրահատուկը մերժելու» գաղափարը՝ ի հակադրություն «հիմնականը հարգելու և յուրահատուկն անփոփոխ թողնելու» գաղափարին: Հիմնականն այստեղ Դառն է, որն անձն է ու անանուն, իսկ յուրահատուկը մարդու կողմից ստեղծված առարկաներն են՝ բազմազան ձևերով ու անուններով: «Հարգիր հիմնականն ու մերժիր յուրահատուկը» նշանակում է՝ լիարժեք իշխանություն տալ Դառյին՝ բոլոր իրերի ներհատուկ բնույթը պահպանելու համար, և միևնույն ժամանակ դադարեցնելու մարդու կողմից ստեղծված, զանազան ձևեր ու անուններ կրող բոլոր առարկաների ձգտումները: Քաղաքական համատեքստում «հարգել հիմնականը» նշանակում է, որ միապետը պետք է կառավարի՝ հիմնվելով Դառյի վրա, և չանի ոչինչ, որ դեմ է բնույթյանը: Միևնույն ժամանակ նա պետք է մերժի բարոյական արժեքների ու կանոնների կոպիտ միջամտությունը և մերժի կեղծիքը, հոեսորարանությունն ու հավակնոտ պահպանքը:

Մեջբեռում

Արտահայտել պարզ գաղափարներ և կատարել պրակտիկ գործեր, և ոչ թե հետևել խորաթափանցության ու դրամային, մերժել եսասիրությունն ու դիմակայել խարդախության և ունայնության գայթակղությանը. հենց սա է հիմնականը հարգելու և յուրահատուկը մերժելու էությունը: (Վան Բի. «*Lungqih hiamianpuyi nkyaruaqhyr*»)

Չունցյու բիֆա 春秋笔法

Գարնան և աշնան տարեգրերի ոճը

«Գարնան և աշնան տարեգրերը» բնութագրվում են պարզ ու համառոտ լեզվով, արտահայտում են գաղափարներ, անուղղակիորեն գովերգում կամ քննադատում պատմական դեմքերն ու իրադարձությունները: Ոճը հայտնի է հետևյալ սկզբունքով՝ «այն, ինչ ներառվում կամ բացառվում է, խոր իմաստ ունի»: Բացի այդ, «յուրաքանչյուր բառ արտացոլում է իմաստունի համակրանքը կամ հակակրանքը» և «նուրբ բառերը խոր իմաստ են պարունակում»: Ըստ ավանդույթի՝ «Գարնան և աշնան տարեգրերը» Կոնֆուցիոնը խմբագրել է Չոռու դիմաստիայի ծիսակատարությունները պահպանելու նպատակով: Տեքստում հեղինակի տեսակետն արտահայտելու համար չի օգտագործվում բանավիճային լեզու: Փոխարենը, այն նրբորեն արտահայտում է դրական և բացասական տեսակետներ պատմական դեմքերի ու իրադարձությունների մասին՝ տալով հակիրճ զնահատականներ, օգտագործելով հատուկ հարանշանակություններով անվանումներ կամ նուրբ արտահայտություններ, որոնք առաջացել են Չոռու ծեսերից: Հետագայում այս ոճն էլ դարձավ պատմական երկեր հավաքելու ավանդական մեթոդ:

Մեջբերում

Ազնվականն ասում է. «Գարնան և աշնան տարեգրքերի» ոճը թարմված է (ներակա), իսկ գրքի իմաստը բացահայտ է. այն արձանագրում է թե՛ իրադարձությունները, թե՛ նրանց խոր նշանակությունը: Այն նուրք է, բայց տրամարանական, խոր, բայց ոչ երկարաշունչ: Դատափետում է չարիքն ու մարդկանց խրախուսում լավ արարքներ գործել: Էլ ո՞վ, եթե ոչ իմաստունը պիտի հավաքեր այս ամենը»: (*Ցույցի մեկնարանությունները «Գարնան և աշնան լրադրեգրեղի մասին»*)

Պաջանֆու 大丈夫

Մեծ մարդ

Այս եզրույթը կիրառվում է իդեալական բարոյական որակ նկարագրելու համար: Մարդու ձեռքբերումները չեն որոշում այն, թե արդյո՞ք նա մեծ է, թե ոչ: Զավանիշը հետևյալն է՝ արդյո՞ք մարդը կարող է ճանաչել և հավատարիմ մնալ Դաոյին: Եթե ընդունենք, որ գոյություն ունեն Դաոյի տարբեր մեկնաբանություններ, մեծ մարդ ճանաչվելու համար անրաժեշտ պայմանները նույնպես տարբեր են: Մենցիուած շեշտում է, որ մեծ մարդը պետք է ունենա Դաոյի օրենքներն իրագործելու ձգոտում, հավատարիմ մնա բարոյական եռթյանը, լինի շիտակ, և ոչ մի արտաքին գործոն (ի հակադրություն նրա ներաշխարհի) չպիտի ազդի Դաոյի օրենքները պահպանելու նրա ձգտման վրա: Սակայն մեկ այլ հին չինացի փիլիսոփա՝ Լաոցին, հավատացած է, որ մեծ մարդը պետք է բողնի ցուցադրական ծեսերն ու նորմերը և վերադառնա բնական վիճակին չ-գործության միջոցով:

Մեջբերումներ

Երկնքի տակ ընդարձակ կացարանում ապրելով, երկնքի տակ պատշաճ վայրում ապրելով՝ պետք է հետևել հիմնական Դառյին: Նպատակներին հասնելոց հետո պետք է Դառն կիրառել մարդկանց հետ շփումներում: Նպատակները չիրականացնելու դեպքում պետք է հետևել միայն Դառյին: Ոչ հարստությունը, ոչ էլ փառքը չեն կարող վնասել Դառն: Ոչ աղքատությունը, ոչ համեստ վարքութարքը չեն ստիպի նրան շեղվել սկզբունքներից: Ոչ սպառնալքը, ոչ էլ բռնի ուժը չեն կարող ճնշել նրան: Այսպիսի մարդուն կարելի է մեծ մարդ կոչել: (*Uնկցիու*)

Ծեսերը վկայում են հավատարմության ու անկեղծության պակասը և կանխագուշակում են խոռվությունը: Նախանշված նորմերը Դառյի ցուցադրական դրսնորումներն են և կարող են հիմարության պատճառ դառնալ: Ուստի մեծ մարդը պետք է լինի լուրջ, բայց ոչ մակերեսային, պարզ, բայց ոչ ցուցամոլ: Այսպիսի մարդը հեռանում է այն ամենից, ինչ մակերեսային է կամ ցուցադրական, և ապրում է պարզ ու ազիվ կյանքով: (*Lաոցզի*)

դանժըն-բուժան 当仁不让

Եթք քեզ հնարավորություն է ընձեռվում բարի գործ անել, մի՛ հապաղիր

Արտահայտությունը նշանակում է, որ ցանկացած մարդ պետք է իրեն դրսնորի էրիկայի կանոնների համաձայն և երբեք չխուսափի պատասխանատվությունից: *Ժղնը* (— բարեգործություն, բարյացակամություն) Կոնֆուցիոսի պաշտպանած բարձրագույն առաջինությունն է: Ընդհանուր առմամբ եզրույթը վերաբերում է կյանքի պարտադիր պայման-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ներին, մասնավորապես երևոյթների, որոնք կարելի է համեմատել բարոյական սկզբունքների և հասարակական արդարության հետ: Եզրույթն իմաստով նման է «ամբողջությամբ նվիրվել՝ ելնելով պարտքի զգացումից» և «բարոյապես պարտավորված զգալ» արտահայտություններին: Այն խրախուսում է բարոյականության և արդարության պաշտպանությունը սեփական պատասխանատվություն համարելը և համարձակվում է իր վրա վերցնել և իրականացնել այդ պատասխանատվությունը:

Մեջքերումներ.

Կոմֆուցիոն ասում էր. «Երբ քեզ հնարավորություն է ընձեռվում բարիք գործել, կարելի է չենթարկել նույնիսկ սեփական ուսուցչին»: («Չրույցներ և ասույթներ»)

Քաջությունը կարող է ծառայել տարրեր նպատակների: Ունանք քաջություն են ցուցաբերում վայրկենական զգացմունքների ազդեցությամբ, որիշները դա անում են հանուն արդարության: Առաքինի մարդը քաջություն է դրսերում, երբ վտանգվում են բարոյական սկզբունքները, իսկ չնչին մարդը հնարավոր է քաջություն ցուցաբերի ցուցադրաբար, որիշների ներկայությամբ: («Չեն եղայրների գրական երկըրը»)

դե ժըն զե սին, շի ժըն զե բեն 得人者兴,失人者崩

Նա, ով ձեռք կբերի մարդկանց աջակցությունը, վեր կելնի, իսկ, ով կկորցնի այդ աջակցությունը, կկործանվի

Եզրույթը նշանակում է՝ նրանք, որ կնվաճեն մարդկանց սրտերը կամ կօգտվեն տաղանդավորների ծառայությունից, վեր կելնեն, մինչդեռ նրանք, որ կկոտրեն մարդկանց սրտերը

կամ որոնց չի հաջողվի իրենց շուրջ հավաքել տաղանդավոր մարդկանց, կկործանվեն: *Ժղն (λ.)* նշանակում է «մարդկանց սրտեր», ինչպես նաև «մարդկային տաղանդներ»: Ասացվածքը, որ ծագել է «Պատմագրի արձանագրություններից», ունի երկու հարանշանակություն: Նախ, երկրի կամ կառավարության վերելքն ու անկումը կախված են մարդկանց սրտերը նվաճելուց: Միայն մարդկանց սրտերը նվաճելու և նրանց ցանկություններին արձագանքելու դեպքում երկրը կամ կառավարությունը կարող է շարունակել բարզավաճել: Սա համապատասխանում է «մարդկանց սրտերի վրա խարսխվելու» և «մարդիկ պետության հիմքն են» արտահայտությունների փիլիսոփայությանը: Երկրորդ, տաղանդը շրջադարձային դեր է խաղում երկրի կամ կառավարության վերելքի կամ անկման հարցում: Միայն ամենատանակ ու ամենաշիտակ մարդկանց ճանաչելով ու հավաքագրելով, միայն նրանց ճիշտ ծևով ներգրավելու դեպքում կարելի է մեծ գործ կատարել, և այդ դեպքում երկիրը և նրա կառավարությունը կայուն ու ապահով կլինեն: Մարդկանց սրտերը նվաճելը սերտորեն կապված է տաղանդներին գրավելու հետ: Մարդկանց սրտերը նվաճելու դեպքում ի վերջո կգրավեք տաղանդավորների ուշադրությունը, իսկ տաղանդավորներին հավաքագրելով ի վերջո կնվաճեք մարդկանց սրտերը: Բոլոր առաջնորդները՝ թե՛ պետությունների դեկավարներ, թե՛ խմբերի կամ թիմերի առաջնորդներ, պետք է հետևեն կառավարման այս մեթոդին:

Մեջերումներ

Երկիրը կրարգավաճի, երբ հաշվի նստի մարդկանց ցանկությունների հետ: Եվ կկործանվի, եթե դեմ գնա մարդկանց կամքին: (*Չուանցի*)

Երկրում չի կարող լինել հարատև խառնաշփոք կամ խա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

դադություն: Խառնաշփորք կշարունակվի, եթե վաս մարդ գա իշխանության: Մյուս կողմից, եթե ազնիվ մարդ կանգնի երկրի դեկին, կգերիշխի խաղաղությունը: (*Չուանցի*)

Ինչ վերաբերում է կառավարմանը, ապա ազգը, որն օգտվում է տաղանդավոր մարդկանց ծառայությունից, կրաքավաճի: Այլապես, այն կլործանվի: (Չառ Ռուի. «*Շազմագեղաների մորեկի մասին»*)

Պյանքե-չենձին 点铁成金

Ոսկե հպում

«Ոսկե հպում» եզրույթը նշանակում է պարզ լեզվով արտահայտել նոր ու նուրբ իմաստ կամ ձևափոխել անցյալի վարպետների հին արտահայտությունները: Արտահայտությունն օգտագործվում է նաև՝ նկարագրելու, թե կայացած գրողն ինչպես է խմբագրում ստեղծագործությունները: Մանր շտկումների միջոցով նա կարող է շրեղություն հաղորդել պարզ ստեղծագործությանը: Հյուսիսային Սուն դինաստիայի բանաստեղծ և գիտնական Հուան Թինձյանը գնահատում ու խրախուսում էր գրաքննադատ Լիու Սյեի այն գաղափարը, ըստ որի դասականներն առաջարկում են գերազանց օրինակներ, որոնցից կարելի է սովորել, բայց նաև ընդգծում էր, որ անհրաժեշտ է ուսումնասիրել և կիրառել դասական գլուխգործոցներում հաճախ հանդիպող արտահայտչամիջոցները՝ խելամիտ ձևափոխման ենթարկելով դրանցում տեղ գտած բառերը, փոխելով տարածված և ծեծված նորաբանությունները՝ սեփական ստեղծագործությանը թարմություն և գրական ոճ հաղորդելու համար: Սուն դինաստիայում և դրանից հետո այս տեսությունը պատճառ դարձավ պեղիայի ստեղծագրության մերողների մասին բազմաթիվ քննարկումների:

Մեջբերումներ

Հին ժամանակներում ամենաունակ գրողներին հաջող-փում էր գերազանց պատկերներ ներկայացնել իրենց երկում նկարագրված գրեթե ամեն ինչի մասին: Նույնիսկ եթե նրանց ստեղծագործություններում տեղ էին գտնում նախկին վարպետների հին արտահայտություններ կամ նախադասություններ, նրանք կարողանում էին ձևափոխել դրանք, ինչպես ալքիմիկոսն է ընդամենը մեկ հպումով կամ շարժումով կապարը վերածում ունենալու: (Հուան Թիմանյան. «Պարսսիան նամակ Հուան Զուֆուին»)

«Երբ գինովցած ես, աղմկում ես, որ անհանգստացնես ու րիշներին, գրեիկի բառապաշարով զայրացնում ես հարևաններիդ, իսկ լիկորը բաժակի միջից ծիծաղում է քեզ վրա ու ասում ես խմիչք եմ, մեղմ ու ջերմ, ինչպես գարնանային եղանակը»: Առաջին երկու նախադասությունները կոպիտ էին, բայց մեզ համար այսպիսի նյութը հրաշալի բանաստեղծության փոխարկելու գործընթացն իսկական վարպետություն է: Հենց սա է կոչվում ոսկե հպում: (Ու Քն. Յանիայի դիուլությունները պոեզիայի մասին»)

ֆա 法

Օրենք

Ֆա (法) եզրույթը վերաբերում է թե՛ օրենքներին, թե՛ իրավական համակարգին: Հին ժամանակներում ֆան (օրենք) և լին (ծեսեր) կիրառվում էին մարդկային վարքագիծը կարգավորելու համար: Լիի նպատակն էր՝ խրախուսել առաքինի վարքագիծը: Ֆա ասելով նկատի են առնվում պատժիչ օրենքները, որոնց նպատակն էր պատժել չար արարքների համար: Ֆա բառի գրաֆիկական արխախկի ձևը (灋) արտա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ցոլում է օրենքի հիմնական էությունը: Այն բաղկացած է երկու տարրից: Տառի աջ մասը, որը կարդացվում է ջի, ցույց է տալիս միաեղջյուրանման առասպեկտական կենդանի, որը կարողանում էր ճիշտը տարրերել սիսալից: Այն դատարանում եղյուրով հրում էր հանցագործին ու մատնանշում նրա գործած հանցանքը: Զախ մասը ցույց է տալիս օրինականության նակարդակը, ճիշտ այնպես, ինչպես ցույց կտար ջրի մակարդակը: Հնում մարդիկ հավատացած էին, որ չնայած օրենքները ստեղծվում ու հրապարակվում են միապետի կողմից, թե՛ նա, թե՛ ընդհանրապես հանրությունը պետք է ուղղորդվեն դրանցով, ինչն էլ իսկապես մարմնավորում է արդարությունն ու օրենքի հավասարությունը: Չինաստանում դեռևս Շան դինաստիայում գրվում էին օրենքներ: Մ.թ.ա. 536 թվականին Չեն նահանգի վարչապետ Ցիշանը հրամայեց իր նահանգի օրենքը գրել բրոնզե անորի վրա, որը բազավորի իշխանության խորհրդանիշն էր: «Պատմության մեջ այն հայտնի էր «մետաղի վրա դաշված օրենսգիրք» անունով: Որպես չինական պատմության մեջ առաջին անգամ գրված և հանրությանը ներկայացված օրենք՝ այն խիստ կարևոր նշանակություն ունեցավ պետության օրենքների հանրային խրախուման և գործարկման մեջ:

Մեջրերումներ

Օրենքները պատիժներ են, որոնց նպատակն է արգելել բռնությունն ու հանցանքը: (Հուան Կուան. «Տրամասություններ աղի ու երկարի մասին»)

Ծեսերը կատարվում են հանցագործություններ գործելուց առաջ, մինչդեռ օրենքները՝ որպես պատիժ, կիրառվում են հետո: («Պատմագրի արձանագրություններ»)

Թե՛ միապետը, թե՛ նրա ենթակաները պիտի պահպանեն օրենքները: («Պատմագրի արձանագրություններ»)

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ֆան ջե դաս ջի դում 反者道之動

Միակ շարժումը վերադառնալն է

Դառյի շարժումը հակառակ վիճակին ձևափոխվելն է կամ սկզբնական վիճակին վերադառնալը: Հասկացությունն առաջարկել է Լաոցին: Լաոցին հավատացած էր, որ Դառն շարժման ու իրերի փոփոխության հիմնարար օրենքն է: Օրենքի էությունը «Վերադարձն» է, որն ունի երկու տարրեր ներիմաստ: Սեկը ցույց է տալիս հակադիրն ու հակառակը, մասնավորապես՝ շարժման մեջ գտնվող երևույթի հնարավոր ձևափոխումն իր հակառակ վիճակին: Մյուսը ներադրում է վերադարձ, այսինքն՝ իրն ի վերջո վերադառնում է իր սկզբնական վիճակին: Այս հասկացությունը մարմնավորում է Լաոցիի և դասսական գիտնականների խոր ընկալումները երևույթների շարժումը կառավարող օրենքի մասին:

Մեջրերում

Դառյի շարժումը ներադրում է ձևափոխում հակառակ վիճակին կամ վերադարձ նախնական վիճակին: Իսկ Դառն մեղմ ու պարզ է գործարկման մեջ: (*Laoziq*)

ֆանայ 泛爱

Մեծ սեր, որ տարածվում է բոլորի վրա

Իմաստային մակարդակում ֆանայը (泛爱), ինչպես բոնայ (博爱) եզրույթը, նշանակում է մեծ սեր, որը տարածվում է բոլորի վրա: Սինչդեռ չինական մտքի պատմության մեջ այն կիրառվել է տարրեր հարակից իմաստներով. եթե բոնայն ընդհանրապես ենթադրում է «բոլոր մարդ արարած-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ների սերի», ապա ֆանայլ ենթադրում է «բոլոր մարդ արարածների, ինչպես նաև բոլոր իրերի (Երևույթների) սեր»: Սա նման է Մենցիոսի այն գաղափարին, ըստ որի առաքինի մարդիկ պիտի սիրեն ուրիշներին ու գնահատեն Երկրի երեսին ամեն ինչ, և Զան Ցայի առաջարկին, ըստ որի՝ բոլոր մարդիկ քույրեր ու եղբայրներ են, իսկ բոլոր իրերը (Երևույթները)՝ ընկերներ:

Մեջքերումներ

Կոնֆուցիոն ասում էր. «Տանը ծնողներին վերաբերվեք ակնածանքով, դրսում տարեցներին վերաբերվեք հարգանքով, եղեք շրջահայաց ու անկեղծ, սիրեք բոլոր մարդկանց և հաճախ այցելեք նրանց, որ վեհանձն են ու առաքինի»: («Չրույցներ և ասույթներ»)

Սիրիք ամեն բան ու բոլոր արարածներին, քանզի նրանք օրգանական ամբողջություն են կազմում: («Չուանիցի»)

Ֆեյմին 非命

Ճակատագրապաշտության (Փատալիզմ) մերժում

Ըստ այս համոզմունքի՝ իրադարձությունները նախասահմանված չեն, և ճակատագրի մերժումը մոհիստական մտքի հիմնական տարրերից է: Մոցին ենթադրում էր, որ աղքատությունն ու խառնաշփորքն առաջ են գալիս մեր իսկ սեփական գործողությունների արդյունքում, և նախասահմանված չեն ճակատագրով: Մարդկային գործերի մեջ ճակատագրին մեղադրելը նույնն է, ինչ եթե գործող անձանց ազատես իրենց գործողությունների պատասխանատվությունից, և դա կարող է պետության մեջ քառա ստեղծել, իսկ մարդկանց կյանքում աղքատություն առաջացնել: Մենք կարող

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ենք պրակտիկ օգուտ ստանալ՝ միայն ընդունելով այնպիսի էթիկական սկզբունքներ, ինչպիսիք են անշահախնդիր սերն ու սեփական ջանքերը:

Մեջրերում

Նրանք, որ ամեն ինչի մեջ մեղադրում են ճակատագրին, վնասում են աշխարհը: Եվ դա է պատճառը, որ Մոցին հակադրվում է նրանց տեսակետին: (*Մոցի*)

գե ց

Չնել/ուսումնասիրել

Եզրույթը նշանակում է՝ ուսումնասիրել կամ զննել իրերը, մարդկանց կամ ցանկացած երևույթ: Կոնֆուցիական գիտնականները մշակել են այս մոտեցումը, որպեսզի մարդկանց օգնեն ճշգրիտ գնահատել իրենց շրջապատող երևույթները և մշակել բարոյականություն և էթիկա՝ որպես մեթոդաբնության տեսակ: Երբեմն եզրույթը կիրառվում է՝ որպես զոյական և նշանակում է որևէ չափանիշ: Երբ եզրույթն օգագործվում է մարդու որակները զնահատելու համար, հղում է անում նրա բարոյական որակներին, այն է՝ մարդու անհատականությանը կամ բարոյական ամբողջականությանը, ինչպես նաև կրթության ոլորտում ձեռքբերումներին: Գրաքննադատության ոլորտում այն ունի երեք հարանշանակություն. նախ և առաջ, այն վերաբերում է չափածո կամ արձակ գրելու հիմնական պահանջներին ու մեթոդներին: Երկրորդ, այն վերաբերում է ճաշակին, ոճին ու գրական ձեռքբերումներին: Երրորդ, այն վերաբերում է գրական երկի ամբողջական կառուցվածքին, կամ թե ինչպես են միաձուլվում ձևն ու բովանդակությունը: Ընդհանուր առմամբ եզ-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացությունները լույսը ցույց է տալիս գրական երկը զմահատելու չափանիշ-ները:

Մեջբերումներ.

Փաստերն ու երևոյթներն ուսումնասիրելն ու վերլուծելը գիտելիք ձեռք բերելու ճիշտ մոտեցում է: Շշմարտությունը կարելի է ձեռք բերել միայն փաստերն ու երևոյթները խորապես քննելու և վերլուծելու դեպքում: («Ծնուրի զիրքը»)

Թաճ դիմաստիայի ուշ շրջանում բանաստեղծներն այլևս օժտված չեն իրենց նախորդների՝ Լի Բայի ու Դու Ֆոի խիզախ, հերոսական որակներով: Նրանք դեռևս մրցում են միմյանց հետ մտքի խորության և գրական կատարելագործման առումով: (Օույան Սիու. «*Օոույան Սիուի պոեզիայի քննադասպուրյուն*»)

Կառուցվածքը, բովանդակությունն ու գրավչությունը պոեզիայի հիմնական գործոններն են: Կառուցվածքն արտացոլում է բանաստեղծական ձևը, բովանդակությունը հաղորդում է զգացմունքը, իսկ գրավչությունը որոշում է՝ արդյո՞ք այն հասել է գեղարվեստական բարձր մակարդակի: (Գան Ցի. «Դուսանի երկերի լիակալրար ժողովածուի նախարան»)

գունդիան 宫调

Գունդիան (Երաժշտական տոնայնություններ)

Դասական չինական երաժշտության տեսությունը համակցում էր տոնայնությունն ու ձայնաստիճանը՝ երաժշտության տարբեր տեսակները դասակարգելու ու անվանելու, ինչպես նաև դրանք բնութագրելու համար: Յոթ ձայնանիշները (նոտա) կոչվում են գուն (宫 երաժշտական նոտագրության մեջ համապատասխանում է 1-ին նոտային), շան (商

համապատասխանում է 2-րդին), *ջուէ* (角 համապատասխանում է 3-րդին), *բյանչի* (变徵 համապատասխանում է 4-րդին), *ջի* (徵 համապատասխանում է 5-րդին), *յու* (羽 համապատասխանում է 6-րդին) և *բյանգուն* (变宫 համապատասխանում է 7-րդին): Դրանցից ցանկացածը կարող է լինել գլխավոր ճայնանիշ, իսկ մյուսները դասավորվեն որոշակի հեռավորությամբ և կազմեն մեկ տոնայնություն: Այն տոնայնությունը, որի գլխավոր նոտան գուման է, կոչվում է *զում*, այն տոնայնությունը, որտեղ գլխավոր է մնացած նոտաներից որևէ մեկը, կոչվում է *դիառ*: Յոթ ձևերը 12 տեմպերամենտների նվազակցությամբ կարող են տեսականորեն կազմված լինել 12 գումանից և 72 դիառնից, ընդհանուր առմամբ՝ 84 երաժշտական տոնայնություն: Սակայն պրակտիկ երաժշտության մեջ ոչ բոլոր գումաներն ու դիառներն էին օգտագործվում: Թան և Սուն դինաստիաների կայսերական երաժշտության մեջ օգտագործվում էին միայն յոթ գումաները, յուրաքանչյուրը՝ կազմված չորս տոնից (ընդհանուր առմամբ՝ 28 երաժշտական տոնայնություն): Հարավային Սուն դինաստիայում յոթ գումաները և տասներկու դիառներն օգտագործվում էին միայն յոթ գումաները և տասներեկու դիառներն օգտագործվում էին հյուսիսային երաժշտության մեջ, իսկ հինգ գումաներն ու չորս դիառները՝ հարավային երաժշտության մեջ: Յուան դինաստիայում վեց գումաները և տասնմեկ դիառներն օգտագործվում էին հյուսիսային երաժշտության մեջ, իսկ հինգ գումաներն ու չորս դիառները՝ հարավային երաժշտության մեջ: Սին և Ցին դինաստիաներում օգտագործվում էին միայն հինգ գումաները և չորս դիառները: Որոշ երաժշտական քննադատներ կանոններ էին ստեղծում տարբեր գումաների և դիառների համար, որոնք օգտագործվում էին տարբեր առիթներով հնչող երաժշտության մեջ՝ ըստ քննության: Գունդիանյի տեսությունը ուղղորդող և կարգավորող դեր էր կատարում քանաստեղծությունների և օպերաների երաժշտական նվազակցման համար, և այն կարելի էր կիրառել՝ հին երաժշտություն «թարգմանելու» համար: Սա հին

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացությունները
չինական արվեստի ուսումնասիրության կարևորագույն
ոլորտ է:

Մեջբերումներ

Յուրաքանչյուր տեմպերամենտ բաղկացած է յոթ նոտա-
յից, որոնցից յուրաքանչյուրը կարող է օգտագործվել՝ որպես
տոնայնության զիսավոր ձայնանիշ։ Ուստի, գոյություն ունի
ընդհանուր առմամբ 84 տոնայնություն։ Անկախ նրանից, թե
որ նոտան է հիմնականը, և անկախ նրանից, թե ինչ տեմպե-
րամենտով է նվազակցությունը, երաժշտությունը կլինի ներ-
դաշնակ և ականջի համար հաճելի։ (*«Սույ դինաստիայի
պարմությունն»*)

Խոսք և երաժշտություն գրելիս առաջին հերթին պետք է
հետևել գունդիային, ապա բավարար ուշադրություն դարձ-
նել հանգին ու ոիթմին, և վերջապես բառերի ընտրության
հարցում պետք է հետևել որոշակի չափանիշների, եթե
որոշել եք գրել տոնայնություն ունեցող լիրիկական բանաս-
տեղծություններ։ (Լի Յու. «Խառը դիմարկումներ»)

Ցի լիրիկական բանաստեղծություն գրելիս գոյություն ու-
նի երեք դժվարություն։ Շարադրանքում դժվար է պատշաճ
կերպով հավասարակշռել բարդությունն ու պարզությունը։
Գունդիայում դժվար է ներդաշնակությունը պահելով հասնել
ճիշտ արագության։ Առողանության մեջ դժվար է ներկայաց-
նել գրական բովանդակությունն այնպես, որ այն լիարժեք
արտահայտի ներկայացված կերպարների զգացմունքները։
(Նին Յառքան. «Միքեր՝ Սյառույտմ դրամակուրզիայի
սկզբունքների մասին»)

զունդեն 公正

Արդար / անաշառ

Գունդեն նշանակում է ազնիվ և արդար: *Գունը* (公), որը *սիի* (私 մասնավոր) հականիշն է, նշանակում է անաշառ ու նշակենտրոն: *Զենը* (正), որը *ցոի* (曲 ծուռ) հականիշն է, երկու իմաստ ունի: Սենն արդարության վրա հիմնված ընդհանուր նորմերն են, մյուսը՝ սեփական վարքագծով այս նորմերին համապատասխանելն ու այլոց հետ հարաբերություններում անկողմնակալ ու անաշառ լինելը: Արդարություն կա հիմնականում այն պետության կամ հասարակության մեջ, որտեղ գոյություն ունեն ընդհանուր բարոյականություն և նորմեր, որոնք միավորում են բոլորին, և որոնց միջոցով մարդիկ դատում են, թե արդյո՞ք այլոք ճիշտ են վարվում: Ժամանակակից հասարակության մեջ արդարություն լինում է այն դեպքում, երբ հաստատությունները, օրենքներն ու մարդիկ արդար են, իսկ հասարակական հարստությունն ու հանրային ռեսուրսներն արդար ձևով են բախչվում: Այն համարվում է նաև առանցքային արժեք, որը նպաստում է բարոյականության և լավ հասարակության զարգացմանը:

Մեջբերումներ.

Սի՛ խախտեք արդարությունը անհատական համակրանքի ու հակալրանքի պատճառով: Պարզեք՝ ինչ չեն սիրում մարդիկ, և դա ընդունեք՝ որպես զգուշացում: (*Գուանցի*)

Թան դինաստիայի Թայցուն կայսրն ասաց. «Այն, ինչ հին ժամանակներում մարդիկ համարում էին մեծ արդարություն, հավանաբար անկողմնակալությունն ու ինքնավերահսկողությունն է՝ առանց եսասիրության: (Ու Զին. «Զեն-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

գուան բազավորության կարևոր քաղաքական գործերը»)

Երկնքի տակ բոլորն արժանանում են արդարության, երբ կառավարումն արդար է: Կառավարումն արդար է, երբ կառավարիչներն արդար են: Մարդիկ արդար են, երբ նրանց միտքն է արդար: («Թան դինաստիային նախորդող շրջանի գրականության անբոլոգիա»)

գուուեն-յունդուն 古文运动

Դասական արձակի շարժում

Եզրույթը հղում է անում գրական բարեփոխումների շարժմանը, որը սկսվել է Թան դինաստիայի կեսերից և տևել մինչև Հյուսիսային Սուն ժամանակաշրջանը: Այն խստ հակադրվում էր ոիքմիկ արձակին, որին բնորոշ էր գուգահեռականությունն ու շափից դուրս ներքագեղորությունը, որը շատ տարածված էր Վեց դինաստիաների ժամանակաշրջանում, և կոչ էր անում վերադառնալ «խսկական» դասական չինարեն գրելառնին: Շարժումն իր բնույթով միաժամանակ և՝ ինտելեկտուալ էր, և՝ հասարակական: Այս շարժման վառ ներկայացուցիչներից էին Հան Յուն և Լիոն Յունյուանը Թան դինաստիայից, Օույան Սիուն, Սու Սունը, Ուան Անչին, Յեն Գունը, Սու Շին և Սու Ջեն Սուն դինաստիայից: Մասնավորապես այս համատեքստում դասական արձակ հասկացությունը հակադրվում էր խստ ոիքմիկ արձակին: Դասական արձակը, որն առաջարկել է Հան Յուն, վերաբերում էր Յին, Արևմտյան Հան և Արևելյան Հան դինաստիաների արձակին, որին բնորոշ էին ճկուն երկարությամբ բանաստեղծական տողերը, որոնք չունեն որոշակի տաղաչափական կադապար և գուգահեռ կառուցվածք: Ինչ վերաբերում է բռվանդակությանը, ապա դասական արձակը նպատակ ուներ արտահայտել գաղափարներ և արտացոլել իրական կյան-

քլ: ՈՒիթմիկ արձակն էլ, նյու կողմից, գրելառճ էր, որը տարածված էր Թան դինաստիային նախորդած շրջանում և խիստ պահանջներ էր սահմանում զուգահեռականության, նրազգեղ բառերի, վանկաշափության, մեղեղու և ակնարկների գործածության առումով: Չնայած այս ժանրում կային հրաշալի ստեղծագործություններ, մեծ մասը ձևով քարացած էին, բովանդակությամբ՝ դատարկ: Սա նկատի ունենալով՝ Հան Յուն կոչ էր անում վերադառնալ Արևմտյան և Արևելյան Հան դինաստիաների գրական ավանդույթին, որպեսզի հնարավոր լինի բարեփոխել գրական ստեղծագործունը: Այս հարցում նրան աջակցում էին մի շարք ականավոր գրողներ, այդ թվում և Լիու Յունյուանը: Նրանք միասին հիմնեցին այն, ինչ հետագայում կոչվելու էր Դասական արձակի շարժում: Հան Յուն նախաձեռնեց գրական ստեղծագործյան բարեփոխման համադրումը Կոնֆուցիական բարոյագիտության վերածննդի հետ, ինչը գրական երկերին հնարավորություն էր տալիս նպաստել երկրի ավելի լավ կառավարմանը: Բայց ուիթմիկ արձակն ամբողջությամբ չվերացավ: Այն շարունակվեց Թան դինաստիայի ուշ շրջանում: Հյուսիային Սուն դինաստիայի գրող Օոռլյան Սիուն, որն ուներ հզոր քաղաքական ազդեցություն, պաշտպանում էր դասական արձակի վերածննդը: Նրա ժամանակակից Սուն Սունը, ինչպես նաև նրա ուսանողներ Ուան Անշին, Ցեն Գունը, Սուն Շին և Սուն Զեն գրում էին դասական արձակի ժանրում, բայց յուրաքանչյուրը՝ միայն իրեն հատուկ ոճով: Սուն Շիի ազդեցությամբ Հուան Թինձյանը, Զեն Շիդառն, Զան Լեյը, Ցին Գուանը և Չառ Բուջին նույնպես դարձան հայտնի արձակագիրներ: Այս գրական դեմքերի ջանքերի շնորհիվ դասական արձակի շարժումը մեծ ծաղկում ապրեց Սուն դինաստիայում:

Մեջբերումներ

Եվ այսպես, հաճախ մենք ստիպված ենք լինում գրել զուտ սոցիալբացիայի նպատակով: Եվ ես շատ եմ ամաչում դրանից: Ի՞նչ օգուտ կարող է տալ դասական արձակը ժամանակակից աշխարհին: Հույս ունեմ, որ կլինեն մարդիկ, որոնք իսկապես կգնահատեն մեր ստեղծագործությունները: (Հան Յու. «Նամակ Ֆեն Սուին՝ արձակ գրելու մասին»)

Սու Շին ասում էր. «Դու Ֆուի բանաստեղծությունները, Հան Յուի արձակն ու Յան Ջենցինի վայելվագրությունը, հենվելով մեծ բանաստեղծների, արձակագիրների ու վայելչագիրների լավագույն ստեղծագործությունների վրա, հասել են գեղարվեստական ձեռքբերման բարձրագույն մակարդակի»: (Ջեն Շիդառ. «Հոռոշակի պոեզիայի ընկալումը»)

հանուն 舎蓄

Նուրբ ակնարկ

Սա գրական երկերի ստեղծման տեխնիկա կամ ոճ է, վերաբերում է պարզ գեղարվեստական պատկեր ներկայացնելիս հակիրճ լեզվի օգտագործմանը, որի դեպքում հարուստ զգացմունքներն ու ներհմաստները երևան են բերվում նրբուն, որպեսզի ընթերցողները կարողանան բնագդաբար զգալ բազմաթիվ թաքնված իմաստները: Զինաստանի վաղ շրջանի գրական-գեղարվեստական ստեղծագործություններում նկատելի է արտահայտման շիտակ ու հավաստի ոճը, ինչպես նաև նուրբ եղանակը: Քանի որ տեխնիկան ի սկզբանեւ առաջացել է դասսական մտքից և վաղ շրջանում կիրավում էր՝ որպես պոեզիայում հզոր անհատներին քննադատելու միջոց, այն շեշտում է զգացմունքի արտահայտումը նուրբ եղանակով, որը ստիպում է մտածել, և արդյունքում պատ-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

կերպերն ուղեկցվում են հարուստ նրբերանգներով կամ քաքնված իմաստով, որը պետք է որ գրավի ընթերցողի ուշադրությունը: Լեզուն պիտի լինի պարզ ու անպաճույժ, բայց նաև ընթերցողին թույլ տա վեր համել քաքնված իմաստները: Թան դիմաստիայի գրաքննադատ Սիկուն Թուն սա համարում էր պոեզիայի քսանչորս ոճերից մեկը: Նուրբ ակնարկը գրողի ճշակութային ձեռքբերումների, ստեղծագործական տեխնիկայի, ինչպես նաև գրական ոճի ու պատկերավոր մտածողության միասնության բարձրագույն մակարդակն է:

Մեջբերումներ

Թեև ոչ մի բառ չկա, սակայն այն ափեափ լցված է այն նյութով, որն ուզում է արտահայտել: Չի ակնարկում գրողի անձնական վշտի մասին, մինչդեռ անհնար է չզգալ այն: Պատճառն այն է, որ այստեղ տեղ են գտել անկեղծ ու բնական զգացմունքներ, և մարդու տրամադրությունը բարձրանում և իշնում է այդ զգացմունքներն արտահայտող երկի հետ: (Սիկուն Թուն. «Պոեզիայի քսանչորս ոճերը»)

Արտահայտվելու նպատակը կարծիքը նրբորեն բարձրացայնեն է: Սու Դունփոն մի անգամ ասել է. «Քանաստեղծություն գրելիս օգտագործվող բառերի քանակը սահմանափակ է, իսկ բանաստեղծությամբ հաղորդվող իմաստները՝ անսահմանափակ լինելու համար անհնարինությունը»:

Լավ *ցի* բանաստեղծություն գրելու հիմնական պայմանը անսահմանափակ իմաստներ պարունակող նուրբ ակնարկն է: Նուրբ ակնարկ նշանակում է՝ իմաստը երբեք ակնհայտ չէ, մինչդեռ բառերն ընդմիշտ արձագանքում են մտքում: Տողը պիտի հնարավորություն տա արտահայտել հետազա միտ-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

քը, իսկ բանաստեղծությունը պիտի այնքան իմաստալից լինի, որ ընթերցողները երկար մտորեն: Այս մեթոդի գեղեցկությունն անսահմանափակ նույր իմաստների արտահայտումն է պարզ լեզվի մեջ: (Ըեն Սյանլուն. «Հսահներ Չի պոկիսյի մասին»)

հանյուն 潛泳

Ամբողջությամբ կլանված լինել (ընթերցանության և ուսումնառության մեջ)

Եզրույթն ի սկզբանե վերաբերում էր դասական երկեր կարդալուն, որը պահանջում է այնքան խորությամբ կլանվել երկով, որը կարելի է համեմատել ջրի մեջ ընկղմվելու հետ, շարունակաբար այնքան խորհրդածելով իմաստի շուրջ, մինչև ամբողջությամբ «մարսես» նրա նշանակությունը, մինչ այն հաղորդի սեփական զգացմունքներն ու ներմրոնումները: Ժամանակի ընթացքում այս մեթոդը վերածվում է սովորելու մի ձևի, որն ընթերցողին ստիպում է կենտրոնացնել սեփական փորձն ու կուտակված գիտելիքը և խորությամբ նշանակած կարդացածի շուրջ, որպեսզի գիտելիքն անվերջ նորացվի ու թարմացվի: Որպես գրական երկերը հասկանալու և մեկնաբանելու մեթոդ՝ այն պահանջում է սեփական միտքը տեղադրել երկի մեջ, խորությամբ հասկանալ, թե ստեղծագործությունն ինչու է այդպես գրված, և զգալ դրա նույր իմաստներն ու գեղարվեստական ընկալումը: Մեթոդի հիմքում ընկած է այն ընկալումը, որ գրական ստեղծագործությունները խիստ ներշնչող և լուսավորող են:

Մեջքերումներ

Երբ գիտնականը զիրք է կարդում, պետք է ուղիղ նստի,

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ուշադիր կարդա, հանգիստ ու բարձրաձայն լճիքը, ողջ միտքը կենտրոնացնի գրքի վրա, ամբողջությամբ կլանվի ու մտորի գրքի նշանակության ու կարևորության մասին՝ ելնելով սեփական փորձից: («Վարչէր Զու Սիի դասակարգված գրույցները»)

Այդպիսի լեզուն ունի ներքին կապակցվածություն և մտքի տրամաբանական գիծ: Եթե մարդը երկար ժամանակ խորապես տարված է լինում ինչոր գործով, բնականաբար, հասկանում է, թե ինչպես կարելի է հստակ արտաքերել բոլոր բարդություններն ու միավորել առանցքային գաղափարները: Կարիք չկա հենվել տվյալ երկի հետ կապ չունեցող տեսարդյունների ու քննարկումների վրա: Դա կնշանակեր միայն սահմանափակվել երանով, ինչ բանատեղծը մտադրվել էր արտահայտել: (Զու Սի. «Զու Սիի երկերի ժողովագույն»)

Մանրամասն ուսումնասիրել գրական համատեքստը և այնքան կլանվել տեքստով, որ ամբողջությամբ տիրապետես նրա էությանը. միայն այսպես կարելի է նշմարել տարբեր գրական երկերի հիմնական տարրերությունները: (Ուան Ֆուցի. «Կցկուոր մեկնարանություններ պոեզիայի մասին Զինշըր սրբուղիայից»)

հանյուեֆու 汊乐府

Յուեֆու պոեզիա

Յուեֆու (乐府) բանաստեղծություններ գրվում էին Հան դինաստիայում: Ի սկզբանե, յուեֆուն կառավարական գրասենյակ էր, որը կայսերական արքունիքը հիմնել էր՝ երաժիշտներ պատրաստելու, ժողովրդական երգեր ու բալադներ հավաքելու, երաժշտություն գրելու և երաժշտական գործիքները դրանց համապատասխանեցնելու համար: Ավելի

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

ուշ այն վերաբերում էր ժողովրդական երգեր ու բալլադներ հավաքելուն, երաժշտությանը համապատասխանեցնելուն ու պալատական երաժիշտների կողմից կատարելուն: Այս ոճի բանաստեղծությունները իին ժողովրդական երգերի ու բալլադների վերաբարությունն էին «Երգերի գիրքը» կազմելուց հետո և իրենց կարևորությամբ հավասար էին «Երգերի գրքին» ու «Չոփ ներբողներին»: Մինչ օրս սերնդեսերունդ փոխանցվել է 50-60 յուեֆու բանաստեղծություն: Դրանք իրապես պատկերում էին այն ժամանակի հասարակության տարրեր կողմերն ու ներկայացնում անկեղծ զգացմունքներ՝ այսպիսով ստեղծելով գրական ավանդույթ, որն արտացոլում էր հասարակ մարդկանց զգացումները: Մասնավորապես յուեֆու բանաստեղծություններն աչքի էին ընկնում կանաց կյանքի վառ պատկերներով: Բոլոր բանաստեղծությունները, որ հնարավոր էր երգել, կամ որոնք գրված էին յուեֆու թեմաներով, հետագայում կոչվեցին յուեֆու բանաստեղծություններ հավաքական անունով:

Մեջքերումներ

Երբ Հան դինաստիայի Ու կայսրը հիմնեց գրասենյակ, որը զբաղվում էր ժողովրդական երգեր ու բալլադներ հավաքելով, բոլորը լսում էին Դայ և Զառ շրջանների ժողովրդական երգերն ու Ցին և Չու շրջանների բալլադները: Դրանք ստեղծվել էին՝ մարդկանց ուրախությունն ու վիշտն արտահայտելու համար կամ ներշնչված էին որոշ իրադարձություններով... («Հան դինաստիայի պալմությունը»)

Յուեֆու բանաստեղծությունները տարբերվում են ոիթմով ու տոնայնությամբ, նվազակցվում են երաժշտությամբ և կատարվում որպես երգ: (Լիու Սյե. «Գրական միլրան ու վիշտներ քանդակելը»)

հառֆանփայ 豪放派

Հառֆան դպրոց / Խիզախ և անբռնազբոս դպրոց

Սա Սուն դինաստիայի երկու *ցի* (詩) լիրիկական դպրոցներից մեկն էր, որը հիմնականում առնչվում էր ազգի հիմնական խնդիրներին և արտահայտում ազնիվ ձգտումներ: Ոճն աչքի էր ընկնում լայն մտահորիզոնով ու խիզախ արտահայտչամիջոցներով, հաճախ օգտվում էր արձակ պոեզիայի մեթոդներից և չէր սահմանափակվում տաղաչափական կարծրատիպերով: Առաջին բանաստեղծը, որն օգտագործեց «խիզախ և անբռնազբոս» եզրույթը, Սու Շին էր: Նաև Սին Ցիշին մեծ գովասանքի էին արժանանում Հարավային Սուն դինաստիայի քննադատների կողմից՝ որպես այս դպրոցի առաջատար բանաստեղծներ: Հյուսիսային Սուն դինաստիայի գորոշ Ֆան Չունյանը հիմնադրեց այս դպրոցն իր *ցի* քննարերգությամբ՝ «Զկնորսի երգը» ստեղծագործությամբ, որը վերածվեց խոշոր բանաստեղծական ոճի՝ հիմնականում Սու Շիի շնորհիվ: Երբ Կենտրոնական դաշտերը հանձնվեցին Չին ուժերին, Սուն դինաստիայի արքունիքը փախավ Յանցցե գետի հարավային կողմը և այնքան թույլ էր, որ չկարողացավ հետ վերցնել կորցրած տարածքը: Բազմաթիվ *ցի* բանաստեղծներ, Սին Ցիշին գլխավորությամբ և այնպիսի հանրահայտ բանաստեղծների աջակցությամբ, ինչպիսիք են Չեն Չույին, Յե Մենդեն, Չու Դունրուն, Չան Յուանգանը, Չան Սյաույանը, Լու Յուուն, Չեն Լյանը և Լիու Գուուն, այս ոճի իրենց բանաստեղծություններում նշում էին, որ տեսչում են վերադառնալ հյուսիս: Նրանք արտահայտում էին իրենց հայրենասիրական զգացմունքներն և սեփական ճակատագիրը նույնացնում էին ողջ ազգի ճակատագրի հետ: Այսպիսով, նրանք հարստացրին արտահայտման ձևերը *ցի* քննարերգության միջոցով և բարձրացրին նրա

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

կարգավիճակը գրականության պատմության ոլորտում: Չնայած այս դպրոցի բանաստեղծները գրում էին խիզախն ու անբռնազբու ոճով, երբեմն ստեղծում էին նաև նուրբ ու գեղանի ցի բանաստեղություններ: Նրանց երկերը հաճախ պարունակում էին բազմաթիվ մեկնաբանություններ ու ակնարկներ, չին պահպանում տաղաչափական կաղապարները և ավելի շատ հնչում էին ոչ թե որպես պոեզիա, այլ որպես արձակ:

Մեջքերումներ

Ցի քնարերգությունը կարելի է բաժանել երկու տեսակի՝ վայելչագեղ ու սահմանափակ և խիզախ ու անբռնազբու: Բանաստեղծությունների առաջին տեսակն աչքի է ընկնում սեփական զգացմունքների նուրբ արտահայտմամբ, իսկ երկրորդ տեսակն ավելի բացահայտ է և աչքի է ընկնում լայն մտահորիզոնով: Այս տարբերակումը պայմանավորված է բանաստեղծների առանձնահատկություններով: Ցին Գուանի ցի բանաստեղծությունները հիմնականում վայելչագեղ են ու նուրբ, մինչդեռ Սու Շիի բանաստեղծությունները խիզախն են ու ճոխ: Ընդհանուր առմամբ ցի քնարերգությանը հատուկ է վայելչագեղ ու սահմանափակ ոճը հետևում է՝ ի տարբերություն խիզախն ու անբռնազբու ոճի: (Զան Յան. «*Ցի լիրիկայի դրադաչափական կաղապարները*»)

Ըստ Զան Յանի՝ ցի քնարերգությունը կարող է լինել կամ վայելչագեղ ու սահմանափակ կամ խիզախ ու անբռնազբու: Ես հավատացած եմ, որ Լի Ցինչառն առաջին, իսկ Սին Ցիցին ել երկրորդ ուղղության լավագույն ներկայացուցիչներից է: Երկուսն ել ծնունդով Զինանից են: Նրանցից հետո ուրիշ ոչ մի ցի բանաստեղծ ի հայտ չի եկել մեր նահանգում: (Ուան Շիցեն. «*Նորեր ցի պոեզիայի մասին*»)

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

հառ ջան բի ուան, ուան ջան բի ուեյ 好战必亡, 忘战必危

Պատերազմ տենչողները կկործանվեն. պատերազմի մասին մոռացողները վտանգի տակ կլինեն

Ուազմատենչ մարդիկ ու ազգերն ի վերջո կկործանվեն, իսկ պատերազմի մասին մոռացողներն անխուսափելիորեն կհայտնվեն վտանգի մեջ: Այսինքն՝ այն երկրները, որ սիրում են պատերազմ սանձազերծել, անպայման կկործանվեն, իսկ այն երկրները, որ պատրաստ չեն պատերազմի, կհայտնվեն վտանգավոր իրավիճակներում: *Հառջան* (好戰) եզրույթով բնութագրվում են նրանք, ովքեր ձգտում են հակամարտություններ ու պատերազմներ իրակրել դրսում հանուն սեփական շահերի, և անտեսում են բարոյական սկզբունքները: *Ուսանջան* (好戰) եզրույթը նշանակում է՝ մոռանալ, որ պատերազմը կարող է անսպասելիորեն սկսվել, և հետևաբար, պատշաճ կերպով պատրաստ չինել դրան: Հին չինացիները հավատում էին, որ ներքին ու արտաքին գործերը պետք է կարգավորել դիմացինի հանդիպ սիրով: Պատերազմները սպառում են երկրի ռեսուրսները և հանգեցնում մարդկային կորուստների. նույնիսկ արդար պատերազմը («պատերազմ պատերազմին վերջ դնելու համար»), որ մոփում էր երկիրը պաշտպանելու և ժողովրդի անվտանգությունն ապահովելու համար, պետք է լինի անխուսափելի այլնուրանք, վերջին տարրերակ: Այս արտահայտությունը միաժամանակ պատկերում է պատերազմի և երկրի վերելքի ու անկման դիալեկտիկական կապը և ներկայացնում խաղաղասեր չինացիների «քաղաքացիական» քննույթը:

Մեջքերումներ

Հետևաբար, եթե նույնիսկ երկիրը հզոր է, բայց հակված է

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

պատերազմների, անվայնան կլործանվի: Եթե նոյնիսկ երկիրը խաղաղ ապրի, բայց մոռանա պատերազմի մասին, անխուսափելիորեն կհայտնվի վտանգի մեջ: Հետևաբար, նոյնիսկ եթե երկրում խաղաղություն է տիրում, ու մարդիկ ապրում են կայուն ու խաղաղ կյանքով, գարնանն ու աշնանը որս է արվում, որն իրականացվում է՝ որպես զորավարժություն: Վասալ պեսությունները պատրաստում են իրենց զորքերին և զորավարժություններ են անցկացնում գարնանն ու աշնանը, որպեսզի շնորհանան պատերազմի մասին: («Գլխավոր իրամամակարի քննախոսությունը պատերազմի մասին»)

Պատերազմ մղելը հանգեցնում է ավերածությունների, իսկ կրվելն ամենաանպատճիվ գործն է: Ուազմատենչ մարդիկ, որոնք ձգուում են հաղթանակ տանել պատերազմում, ի վերջո միշտ զղուում են դրա համար: (Միմա Գուան. «Պատմությունը՝ որպես հայելի»)

հեռուեյզուի 和为贵

Ներդաշնակությունն ամենաանգինն է

Ներդաշնակությունը դարձրեք առաջնային նպատակ: Հե (和) նշանակում է համապատասխանություն և նպատակահարմարություն: Սա հարազատ մարդկանց գոյակցությունն է, որը հիմնված է տարրերությունների ու բազմազանության հանդեպ հարգանքի վրա: Ի սկզբանե, արտահայտությունը ցույց էր տալիս լիի (⌘ ծեսեր/հասարակական նորմեր) դերը, այն է՝ ապահովել որոշակի հասարակական կարգավիճակ ունեցող քաղաքացիների ներդաշնակ գոյակցությունը, որտեղ յուրաքանչյուր ոք ունի իր տեղը և օգտվում է փոխահավետ հարաբերություններից, ինչն էլ հանգեցնում է «ներդաշնակ, միևնույն ժամանակ բազմազան» հասարակու-

թյան ատեղծման: Սա կոնֆուցիական դպրոցի կարևոր բարյական հասկացություն է, որը կիրառվում է ներանձնային հարաբերությունները կարգավորելիս: Հետազայում եզրույթը զարգացավ և վերաբերում էր ընդհանուր առմամբ մարդկանց, խմբերի ու պետությունների միջև ներդաշնակ, հարազատ, խաղաղ ու փոխհամաձայնեցված հարաբերություններին: Սա բնորոշում է չինացի ժողովրդի «քաղաքացիական» եռությունը. նրանք դեմ են ռազմական հակամարտություններին և ձգտում են խաղաղության ու ներդաշնակության:

Մեջբերում

Յունին ասում էր. «Ծեսերի օգնությանը դիմելիս ներդաշնակությունը դարձրեք առաջնային նպատակ: Սա զլիսավոր առանձնահատկություն է, որը բնորոշում է անցյալի միապետ կառավարիչներին: Մշտապես գործեք ներդաշնակության օրենքի համաձայն՝ անկախ նրանից, թե խնդրո առարկան լուրջ է, թե չնչին: Սակայն երբեմն այս օրենքը չի գործում: Եթե ձգտում եք ներդաշնակության հանուն ներդաշնակության, և այն չեք լրացնում ծեսերով, հաջողության հույսերն ի շիք են դառնում: («Չրույցներ և ասույթներ»)

հուանիհան 荒寒

Մռայլ ու լրված

Եզրույթը վերաբերում է լրված ու ամայի լանդշաֆտներին, որոնք նկարագրված կամ պատկերված են դասական բանաստեղծություններում կամ կտավներում և միայնության ու լրվածության զգացում են հաղորդում: Թաճ և Սուճ դիմաստիաներում որոշ բանաստեղծներ, որոնք արսորվում կամ ուղարկվում են սահմանային կայազորներում աշխա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

տելու, ոչ միայն ապրում էին լրված վայրերում, այլև սարսափելի դատարկության զգացում էին ունենում, քանի որ ապագայի հանդեպ ոչ մի հույս չկար, և նրանք ըստ արժանվույն չէին գնահատվում ու չէին ընդունվում: Արյունքում նրանք պոեզիայում ստեղծում էին դատարկ, լրված տեսարաններ, որոնցում արտահայտում էին ներքին ամրողականությունը պահպանելու հաստատականությունն ու վճռականությունը: Այսպիսով նրանք ստեղծեցին յուրահատուկ ստեղծագործական մեթոդ, որն ի զորու է անցնել իրականության սահմանները: Մոռայլ, լրված տեսարաններով նկարներն ակնարկում են միայնակ մարդու հաղորդակցությունը բնության հետ՝ արտահայտելով նաև մարդու և բնության միացումը: Այսպիսի բանաստեղծություններն ու կտավները շինական մշակույթին բնորոշ ճաշակ ու ոճ են ներկայացնում:

Մեջքերումներ

Մեծ պատից այն կողմ մոայլ ու ամայի տեսարանների վառ նկարագրությունները Նալան Սինդեհ ցի բանաստեղծություններում ստեղծվել են անձնական փորձից. նա ուղեկցում էր կայսերը ստուգումների ընթացքում, ուստիև նրա պատկերներն ավելի մոտ են բնությանը: Մյուս կողմից նրա երկար ցի բանաստեղծությունները փոքր-ինչ ազատ են, իսկ կարծ բանաստեղծություններն ավելի հաջողված են: Սի՞թե պատաճանն այն է, որ նրա տաղանդը սահմաններ ուներ: (Յայ Սունյուն. «*Քերինի մեկնաբանությունները Ցի պոեղայի մասին»)*

Ինչ վերաբերում է ձնապատ տեսարաններին, որոնք ստեղծվել են Ուան Ուեյից հետո, ապա ուշագրավ էին հատկապես Լի Չենի, Ֆան Քուանի, Լի Թանի և Սու Դանինի գործերը: Չնայած նրանց վրձնահարվածները կյանքով լի էին, դրանք չի կարելի համեմատել Ուան Ուեյի հետ՝ մոայլ

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

միայնուքյան զգայական ընկալման տեսակետից: (Յուն Շո-
ուփին. «Նանքյանի մեկնաբանությունները կուպանիրի մա-
սին»):

Հուան Հե 黃河

Դեղին գետը

Չինհայ-Շիբեթյան բարձրավանդակից սկիզբ առնող Դե-
ղին գետը Չինաստանի երկրորդ ամենաերկար գետն է, որը
հոսում է դեպի արևելք՝ Չինհայ, Սիչուան, Գանսու նահանգ-
ների, Նինսյա Հոփ ինքնավար շրջանի և Ներքին Սոնգոնյա
ինքնավար շրջանի միջով, ինչպես նաև Չաանսի, Չանսի,
Հենան և Չանդուն նահանգներով և լցվում է Բոհայ ծովը:
Գետի ընդհանուր երկարությունը 5464 կիլոմետր է, աշխար-
հի խոշորագույն ջրային ուժիներից է: Գետն անունը ստացել
է իր դեղնավուն գույնի համար, որի պատճառը ջրի մեջ լց-
վող մեծ քանակությամբ տիղմն է: Դեղին գետը, որն իրա-
վամբ համարվում է չինացիների ու չինական մշակույթի օր-
րան, ժողովրդի շրջանում հայտնի է Մայր գետ անունով և
դարձել է չինացիների կարևոր մշակութային խորհրդանիշ:

Գետը խորհրդանշում է այն հերոսականությունն ու համա-
ռությունը, որով չինացի ազգն առաջ է գնում՝ չնայած բոլոր
դժվարություններին:

Մեջքերում

Սարերի ետևում մայր մտնող արևը շողոսմ է, Դեղին գե-
տը հոսում է դեպի ծով: Բարձրացիր սարի գագաքն ու տես
գետի համայնապատկերը, որ հասնում է հորիզոնից հորի-
զոն: (Ուան Զիհուան. «Գուանցուն աշխարակ մազլցելով»)

հուեյմին 两仪

Օգտակար լինել մարդկանց

Եզրույթը նշանակում է օգտակար լինել մարդկանց և ապահովել ամեն ինչով: *Հուեյմին* (惠) եզրույթը բարեգործ կառավարման և ժողովրդին սիրելու կոնկրետ դրսևորում է, որը կենտրոնանում է հարստությունը մարդկանց բաժանելու և նրանց օգտակար լինելու գաղափարի վրա: Ըեշտը դրվում է նախ մարդկանց շահերի վրա, որի դեպքում նրանք անպայման կաջակցեն թե՛ կառավարչին և թե՛ նյուս պաշտոնյաներին: Եզրույթը մասնավորապես նշանակում է, որ քաղաքականությունն ու ձեռնարկված միջոցները պետք է հիմնված լինեն հանրության շահի վրա, իրականություն դառնան և բավարարեն մարդկանց իրական կարիքները, ինչպես նաև ապահովեն նրանց բարեկեցությունը: Նրանք չպիտի հակադրվեն հանրային շահին, կամ ավելի վատ, չպիտի խարեն կամ դիմեն քոնի ուժի:

Մեջքերուսմներ

Երկինքն օգտակար է մարդկանց, և կառավարիչը պետք է հետևի երկնքի կամքին: (*Պալմության զիրքը*)

Հարստությունը մարդկանց բաժանելը կամ մարդկանց նյութական բարիք բերելը կոչվում է հուեյ: (*Մնացիուս*)

Երբ Ցիի Չին կոմսը Չին պետությունում էր, նա խորհուրդ հարցրեց Շի Կուանին, թե ինչպես կառավարի՝ ասելով. «Ի՞նչ խորհուրդ կտաս»: «Միակ բանը, որ պետք է անել, մարդկանց մասին հոգ տանելն է», - պատասխանեց Շի Կուանը: Կոմսը վերադարձավ Ցի նահանգ, բացեց պետական ամբարները և ցորենը բաժանեց աղքատներին: Նա բացեց պալատի գանձարանը և փող բաժանեց նրանց, ովքեր չունե-

ին կերակրող ընտանիք: Նախորդ տարիներից մնացած հացահատիկ կամ չբաշխած հարստություն այլևս չկար: Պալատի սպասավորները, որոնք չարժանացան նրա համակրանքին, իրավունք ստացան հեռանալ ու ամուսնանալ, իսկ յոթանասունն անց մարդկանց պետությունն ապահովեց հացահատիկով: (*Հանձեյցի*)

Ճ / Նախանշան

Ճ (Ն) եզրույթը նախանշան է, որը նատնանշում է իրերի ի հայտ գալը կամ փոխվելը: Հին չինացիները հավատացած էին, որ նուրբ նախանշանը հայտնվում է այն ժամանակ, երբ ինչ-որ նոր բան պիտի ի հայտ գա, կամ երբ մի հին բան պիտի փոխվի, կամ մինչ այն պահը, երբ մարդկային եռթյան մեջ տարբերակվում են բարին ու չարը: Նախանշանը կամ տեսանելի է կամ բարնված է ինչ-որ հին իրի մեջ: Պետք է զարգացնել նախանշանը տեսնելու և օգտագործելու ունակությունը: Երբ մարդը հմուտ է և նախանշանից հասկանում է, որ ինչ-որ նոր բան է հայտնվում կամ փոխվում, և ճիշտ պահին օգտվում է դրանից, ապա կարող է կանխատեսել ու հասկանալ, թե իրերն ինչպես են ծագում ու փոխվում այսպիսով գնալով ցանկալի ճանապարհով ու խուսափելով վնասներից:

Մեջքերումներ.

Ճի՝ նշանակում է նուրբ նախանշան, որը կանխագուշակում է բարին կամ չարը: Առաքինի մարդն առանց վարանելու գործում է ճիշտ պահին, երբ նախանշան է տեսնում: (*«Փոլիդությունների գիրը»*)

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Զի՞ նշանակում է նախանշան իրերի վոփոխության մասին և ցույց է տալիս բարու և չարի տարբերակումը մարդկային եռթյան մեջ: (Չոռ Դունյի. «Կոնֆուցիական մոքի էռթյուն»)

Ճի սուտ բու յու, ու շի յու ժըն 己所不欲, 勿施于人

**Ուրիշների հետ մի վարվիր այնպես, ինչպես չես
ցանկանա, որ քեզ հետ վարվեն**

Ուրիշներին մի՛ պարտադրիր այն, ինչ ինքդ չես ուզում: Սա «նրբանկատության» ճանապարհն է, որը պաշտպանում էր Կոնֆուցիոսը: Այն կոչ է անում սեփական մտքի միջոցով քննել և հասկանալ այլոց մտքերը: Ժամանակակից մեկնարանությամբ՝ այն նշանակում է պատկերացնել քեզ ուրիշի փոխարեն կամ մտածել նրանց տեսանկյունից: Նրա փիփոխայական հիմքը մարդկանց եռթյան նմանությունն է: Սա կարևոր սկզբունք է, որ կոնֆուցիական գիտնականները առաջ էին քաշում՝ ներանձնային հարաբերությունները կարգավորելիս, իսկ այժմ իմաստն ընդլայնվել է և ներառում է նաև միջազգային հարաբերությունների ոլորտը, որն առնչվում է գերտերությունների քաղաքական քախումների հետ: Նրա հիմնական տարրերն են՝ քարյացակամությունը /քարեգործությունը, հավասարությունն ու հանդուժողականությունը:

Մեջքերումներ.

Կոնֆուցիոն ասում էր. «Մարդկային եռթյունը ծննդի պահին նույնն է, և փոխվում է միայն շրջապատի միջոցով»: («Չրույցներ և ասույթներ»)

Ցիզունը հարցնում էր. «Կա՞ արդյոք որևէ ուսմունք, որը

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

կարող է ծառայել՝ որպես ողջ կյանքը կարգավորելու հարատև սկզբունք»: Կոնֆուցիոսը պատասխանում է. «Անշուշտ. պետք է նրբանկատ լինել: Ուրիշների հետ մի վարվիր այնպես, ինչպես չես ուզի, որ քեզ հետ վարվեն»: («Չրուցներ և ասույթներ»)

Չյան ՚ան ֆենգու 建安风骨

Չյանանի գրական ոճը

Չյանան գրական ոճը, որը նաև հայտնի է Հան-Ռուեյ գրական ոճ անունով, ենթադրում է գրական ոճը Հան դինաստիայի Չյանան դարաշրջանից (196-220) մինչև Հյուսիսային Ռուեյ դինաստիայի վաղ շրջան, որն աչքի է ընկնում կրքի, հուզմունքի ու վրդրվմունքի հզոր արտահայտությամբ: Հան դինաստիայի վերջին տարիներն աչքի ընկան քաղաքական վայրիվերումներով, անդադար պատերազմներով ու մարդկանց տեղահանումներով: Կարկառուն գրական դեմքերը, ինչպիսիք են Յան Յանն, Յան Փին ու Յան Ջին և «Յոք վարպետները», այսինքն՝ Կուն Ռունը, Չեն Լին, Ռուան Յանը, Սու Գանը, Ռուան Յուն, Ին Յանը և Լիու Ջենը, ինչպես նաև բանաստեղծության Յայ Յանը, Ժառանգել են Հան դինաստիայի ժողովրդական երգերի ռեալիստական ավանդույթը: Իրենց ստեղծագործություններում նրանք անդրադառնում են այնպիսի թեմաների, ինչպիսիք են հասարակական տեղաշրժերը, մարդկանց տառապանքը և անհատների ձգտումները՝ արտահայտելով ստեղծագործական ոգի և ազնիվ նպատակներ հետապնդելու վճռականությունը: Նրանց ստեղծագործությունները պատմում են մեծ դժվարություններ հաղթահարելու ուժի, խիզախության և վճռականության մասին: Չյանան գրականությունը, որն այս դարաշրջանի համար աչքի էր ընկնում մելամադությամբ ու հզոր ոճով, ի հայտ

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացությունները

եկավ՝ որպես յուրահասուկ ժանր և հետագա սերունդների կողմից դիտարկվեց՝ որպես աչքի լնկնող գրական ոճ, որտեղ հատկապես գնահատվում էր Չյանան պոեզիան:

Մեջբերում

Չյանան դարաշրջանի սկզբում բանաստեղծությունները հինգ բառանոց տողերով գրելն աննախադեալ տարածում գտավ: Գրական տիրույթում գերիշխող դիրք էին գրավում հատկապես Յան Փին (Ուեյի Ուեն կայարը) և Յա Զին (Չենի Սի արքայազնը): Ժամանակի մյուս առաջատար բանաստեղծներից էին Ուան Յանը, Սու Գանը, Ին Յանը և Լիու Ջենը: Նրանք սիրում էին գեղեցիկ տեսարաններ, մասնավորապես լճեր ու այգիներ, սիրում էին նաև խնջույքներ կազմակերպել ու խմել: Նրանք իրենց բանաստեղծություններում կրով ու նրբագեղությամբ գրում էին զգացմունքների ու ձգտումների մասին: (Լիու Սյե. «Գրական միլրքն ու վիշապները բանդակելը»)

Ճիերի Հետաքանակ

Մարդիր միտքն առեղծվածներից

Եզրույթը, որ վերցված է «Սունցիից», նշանակում է միտքը մարդել առեղծվածներից, ինչո կօգնի հասկանալ Դառն: Սունցին հավատացած է, որ մարդու բարոյական ամբողջականությունը կախված է Դառյի նրա ընկալումից: Սակայն մարդու համակրանքն ու հակակրանքը, ցանկություններն ու արտաքին գործոնները խոչընդոտում են նրա կողմից Դառյի ընկալումը: Այսպիսի արգելքները վերացնելու համար անհրաժեշտ է զարգացնել միտքը, դարձնել այն բաց, կենտրոնացած ու հանդարտ:

Մեջբեռում

Իմաստունները գիտեին, թե որքան վնասակար են առեղծվածները, որոնք շեղում են մարդու միտքը: Ուշադրությունը չպետք է սահմանափակվի միայն համակրանքով կամ հակակրանքով, իրերի ծագումով ու վախճանով, ձեռքի տակ կամ հեռու գտնվող իրերով, իրերի խոր կամ մակերեսային կողմերով, անցյալով կամ ներկայով: Փոխարենը, բոլոր իրերը պետք է դասավորված լինեն և զնահատվեն՝ ըստ սահմանված շափանիշի: Այսպիսով, կարելի է խուսափել իրերի միակողմանի ընկալումից, ապա՝ նրա կարգի շուրջ բազմաթիվ բյուրընուուններից, որի պատճառը նրանց միջև բազմաթիվ տարբերություններն են: («*Unisigh*»)

Ճինջի 精气

Կենսական էներգիա

Կենսական էներգիան ամենադրական և նուրբ էներգիան է: Կենսական էներգիայի ամենահին մանրամասն բացառությունը կարելի է գտնել «Գուանցիում»: Ըստ գրքի՝ ամենադրական և նուրբ էներգիան Դաոյի որոշակի դրսւորումն է: Զն ունեցող բոլոր իրերը և բոլոր մարդ արարածները կազմված են կենսական էներգիայից. համարվում է, որ մարդու կյանքը, զգացմունքներն ու իմացությունը նույնպես ծագում են կենսական էներգիայից:

Մեջբեռումներ

Ամեն ինչ ծնունդ է առնում կենսական էներգիայից: Կենսական էներգիան հողի վրա ստեղծում է բերք, իսկ երկնքում՝ աստղեր: Երբ կենսական էներգիան հայտնվում է երկնքի ու

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

երկրի միջև, առաջանում են ուրվականներ ու հոգիներ: Եթք
այն մուտք է գործում մարդկային սիրտ, խմաստուն է ծնվում:
(«Դուսնցի»)

Գոյատևման համար մարդկանց պետք է կենական
էներգիա: Եթք մարդիկ մահանում են, կենական էներգիան
հօդ է ցնդում: (Ուան Չուն. «Կրրական լրարքի դպրոցների
համեմատական ուսումնասիրություն»)

բեձի-ֆուլի 克己复礼

Սանձիր քեզ և հետևիր հասարակական նորմերին

Սահմանափակիր խոսքերդ ու արարքներդ և համապա-
տասխանեցրու հասարակական նորմերին: Եզրույթն ի
հայտ է եկել «Զրույցներ և ասույթներից»: Սա այն հիմնա-
րար մեթոդն էր, որ Կոնֆուցիոսը խորհուրդ էր տալիս բարե-
գործության/բարյացակամության հասնելու համար: Ըստ
Կոնֆուցիոսի՝ հասարակական նորմերը պետք է չափանիշ
լինեն բարյացակամություն ձևավորելու համար: Արտաքին
առումով ձեր խոսքերն ու արարքները պետք է ենթարկվեն
հասարակական նորմերին, բայց ինչն ավելի կարևոր է,
անհրաժեշտ է սանձել սեփական եսասիրական ցանկու-
թյունները, որպեսզի տեսնեք, լսեք, խոսեք ու գործեք այդ
նորմերի շրջանակներում: Եվ հենց որ «սահմանափակեք
ձեզ ու գործեք ինչպես հարկն է», կհասնեք բարյացակամու-
թյան:

Մեջքերում

Յան Յուանը հարցրեց, թե ինչ է բարյացակամությունը, և
Կոնֆուցիոսն ասաց. «Սահմանափակիր քեզ և պահիր քեզ
այնպես, ինչպես հարկն է. դա է բարյացակամությունը: Եթք

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

կարողանաս զավել քեզ ու պահել հավուր պատշաճի, բոլորը կզուրգեն ու կասեն, որ քարի ես: Պիտի ինքդ զարգացնես քարյացակամությունը: Ինչպէ՞ս կարող են ուրիշները զարգացնել այն քո փոխարեն: («Զրուցման և ասույթներ»)

բուդան 枯淡

Չոր պարզություն

Եզրույթը վերաբերում է գրական ոճին, որը թվում է պարզ ու չոր, մեղմ ու չափավոր: Այստեղ չոր ու պարզ չի նշանակում ձանձրալի, միապաղաղ, հասարակ կամ մակերեսային: Այն արտահայտության միջոց է, որը, թեև թվում է տաղտկալի, հարուստ է ներքին բովանդակությամբ: Այս ոճի նպատակն է՝ պարզ ու հասարակ լեզվով արտահայտել միտք, որն օժնված է լայնախոհությամբ և խորությամբ և ստեղծում է խոր ու նուրբ, հարուստ ու հեռահար ազդեցություն: Հյուսիսային Սուն դինաստիայի վաղ շրջանում գրականության մեջ գերիշխում էր զարդարուն ու ճնիս ոճը: Գրողները, օրինակ՝ Մեյ Յաոչենն ու Օույան Սիուն պայքարում էին գրական քարեփոխումների համար և հավանություն էին տալիս պարզ ու խորաքափանց ոճին: Նրանք պնդում էին, որ պոեզիայի էությունը վավերականությունն է ու ճշնարիտ զգացմունքները, և որ չափազանց շատ հոեստրաքանության կարիք չկա: Թառ Յուանմինի և Լիու Յունյուանի պոեզիայի դասական օրինակները մտաքերելով՝ Սու Շին առաջադրեց «չոր պարզության» գաղափարը: Այն իմաստով մոտ է «հանդարտ», «համեստ» և «ոչ հավակնոտ» իմաստներին, ինչը դասականության խաղաղ ու խոր գեղեցկության ու կոնֆուշիականության նրբագեղ գեղեցկության համադրություն է:

Մեջբերումներ

Ես գնահատում եմ չոր պարզությունը. արտաքուստ այն դալով ու չոր է թվում, բայց ներքուստ շատ հարուստ է: Թվում է, թե հասարակ է, բայց իրականում գեղեցիկ է: Թառ Յուանմինի ու Լիոն Յունյուանի պոեզիան նման է այս ոճին: Եթե ներքինն ու արտաքինը հավասարապես չոր լինեն, ինչո՞ւ պիտի գովենք այս ոճը: (Սու Շի. «Հան Յուի և Լիոն Յունյուանի բանասրեկծությունների քննադարություն»)

Հետևաբար, այն, ինչ պարզ է թվում, իրականում ամենափառահեղն է աշխարհում: Իսկ այն, ինչ չոր ու բորշոմած է թվում, իրականում ամենաապտղաբերն է: Թառ Յուանմինի ու նրա հետևորդների բանաստեղծությունները բնական են հնչում: Կրանք ինչ-որ չափով, բայց ոչ ամբողջությամբ, ձեռք են բերել գեղարվեստական ազդեցություն: (Բառ Հուեյ. «Պատրասիսն Ֆու Դանգկի պոհպահյի քննարկմանը»)

բուանջուան 狂狷

Պրոակտիվությունն ընդդեմ շրջահայացության

Պրոակտիվություն և շրջահայացություն. այս եզրույթները Կոնֆուցիոսն օգտագործում եր՝ երկու հակադիր վերաբերմունքներ ու վարքագծի ձևեր նկարագրելու համար: Պրոակտիվ մարդիկ հակված են արմատական մոտեցման և ոչ մի զիջման չեն գնում բարոյական սկզբունքների ու արդարության պահպանման հարցում: Ծրջահայաց մարդիկ, մյուս կողմից, հակված են զգուշավորության և պատրաստ են զիջումների գնալ, բայց՝ առանց բարոյական ամբողջականությունը զիջելու: Կոնֆուցիոսը հավատացած էր, որ կյանքում իդեալական վարքագիծը ուկե միջինն է՝ ոչ առաջ անցնել մյուսներից, ոչ էլ հետ մնալ: Պրոակտիվ ու շրջահայաց մար-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

դիկ ինչ-որ չափով ծայրահեղական են, երկուսն էլ ունեն
առավելություններ, քանի որ երկուսն էլ կառչած են բարոյա-
կան սկզբունքներից ու արդարությունից:

Մեջբերում

Կոմֆուցիոն ասում էր. «Երբ չես գտնում որևէ մեկին, որը
պահպանում է Ուկե միջինի կանոնը, կարող ես ընկերանալ
նրանց հետ, որոնք գործողությունների մեջ կամ պրոակտիվ
են, կամ՝ շրջահայաց: Առաջին խումբը ձգտում է ամեն ինչ
հավուր պատշաճի անել, իսկ երկրորդը հետ է պահում իրեն
որևէ անբար կամ անարդար գործողությունից»: («Չրուց-
մեր և ասույթներ»)

Իհցու 理趣

Նյութը՝ գեղարվեստական գրավչության միջոցով

Եզրույթը վերաբերում է ինչպես ստեղծագործության վի-
լիստիայական նյութին, այնպես էլ գրական գրավչությանը,
որն ընթերցողներին հաղորդվում է գեղարվեստական պատ-
կերի միջոցով: Այլ կերպ ասած՝ այն ցույց է տալիս վիլիստ-
իայական ներըմբռնումները և գեղագիտությունը, որ ընթեր-
ցողները ստանում են դասական գրական երկերի գնահատո-
ղական ընթերցման գործընթացում: Օրինակ, Ուեյ, Զին կամ
Հարավային և Հյուսիսային դիմաստիաների բանաստեղծ-
ները սիրում էին իրենց բանաստեղծություններում անդրա-
դառնալ վիլիստիայության խրթին դպրոցներին, իսկ Սուն
դիմաստիայի բանաստեղծները հաճախ օգտվում էին պոե-
գիայից՝ իրենց ժամանակի հասարակությունը մեկնարանե-
լու համար: Հետագա շրջանի որոշ քննադատներ այս երկու
մոտեցումն էլ համարեցին թերի: Ոմանք նույնիսկ պնդում

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

էին, որ բանաստեղծության մեջ փիլիսոփիայական բովանդակությունը և գեղարվեստական պատկերները պետք է դիտարկվեն միասին: Փոխարենը նրանք կարծում էին, որ բանաստեղծության հիմնական բովանդակությունը պետք է հաղորդվի միայն գեղարվեստական պատկերների միջոցով, որպեսզի այն ընկալվի ընթերցողների կողմից՝ երկի գեղարվեստական առանձնահատկությունների գնահատման միջոցով, այսինքն՝ «ընկալել նյութը գեղարվեստական հմայքի միջոցով»: Այս արտահայտության մեջ *լին* (理) այն ներըմբոնումներն են, որոնք առաջանում են ավելի շատ կյանքի փորձից, քան գրքային գիտելիքից ու կրթությունից: Այն կարելի է ձեռք բերել կամ արտահայտել տրամաբանական փաստարկնան միջոցով: *Ցուն* (趣) գեղագիտական հաճույքն է, որ ընթերցողները ձեռք են բերում, երբ դասական գրական երկեր ընթերցելիս խորանում են կյանքի իրողությունների մեջ: Այս հասկացությունը քննարկումների տեղիք է տալիս այն հարցի շուրջ, թե արդյո՞ք բանաստեղծական ստեղծագործության մեջ տրամաբանական փաստարկները կարող են վերածվել բանականության և ճաշակի միավորման: Այն քննադատներին օգնում է դիալեկտիկ մեթոդով գնահատել նրանց, որոնց գրական երկերում կա թե՛ տրամաբանություն, թե՛ ներհայեցողություն:

Մեջքերումներ

Ամենայն հավանականությամբ, դասական բանաստեղծներն անփութորեն չեն վերաբերվում բանաստեղծություններ գրելուն: Եթե որոշում էին բանաստեղծություն գրել, ձգտում էին ստեղծել լավագույն երկը: Ինչ վերաբերում է փիլիսոփայական նյութին, փաստարկն ու նրա գեղագիտական հմայքը պետք է ամբողջական լինեն: Ինչ վերաբերում է պատումին, ապա պատմության տրամաբանությունը հստակեց-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

վում էր, իսկ նկարագրությունները բնական ու ճշմարտան-ման էին թվում: (Քառ Հուեյ. «Նամակ Յին Յիհուային՝ պոե-ղիայի մասին»)

Բանաստեղծությունը չի կարող խուսափել վիլխուսիայական բովանդակությունից, բայց լավագույնս համադրում է փաստարկն ու գեղագիտական գրավությունը: Ուղղակի փաստարկը տեղին չէ պոեզիայի համար: (Ծես Դեցիան. «Յին դիմասրիայի բանասրին ծովությունների ժողովածու»)

Այսուհետեւ պատճենագիրը

Երկու ձև

Իրերն իրականություն են դառնում և գոյություն են ունենում երկու ձևով, և այդ երկու ձևի միջոցով էլ նկարագրվում է, թե ինչպես են ձևավորվում ութ եռագրերը: Ինչպես բացատրում է «Փոփոխությունների գիրքը», «Փոփոխությունները ներառում են բայցին (太极 ամենածայրահեղը), որը ստեղծում է երկու ձև: Երկու ձևերը ստեղծում են չորս պատկեր, իսկ չորս պատկերները ծնունդ են տալիս ութ եռագրերից: Թայճին բաժանվում է երկու փոխլրացնող, բայց հակադիր մասի կամ ձևի: Հին չինացիները տարբեր կարծիքներ ունեին այն մասին, թե իրենցից ինչ են ներկայացնում ձևերը: Ոմանք հավատում էին, որ տիեզերքի կազմավորման տեսանկյունից երկու ձևերը երկինքը և երկիրը կամ ինը և յան են: Սյուսները հավատացած էին, որ որպես գուշակության մեջ օգտագործվող եզրույթ՝ «Երկու ձև» արտահայտությունը վերաբերում է երկու խմբի, որոնք կազմվում են գուշակության մեջ հազարատերևի 49 ցողունների կիրառությունից, կամ երկու հոծ կամ ընդհատվող գծի, որոնք հանդիպում են «Փոփոխությունների գրքի» վեցագրերում:

Մեջբերումներ

Երբ նախնադարյան քառոր գրվեց, սկիզբ առան երկինքն ու երկիրը: Հետևաբար, ինչպես ասում է «Փոփոխությունների գիրքը», բայցին (ամենածայրահեղը) ծնունդ է տալիս երկու ձևի: (Կուն Յինդա. «Փոփոխությունների գրքի» ճշմարիկ նշանակություննը»)

Երբ ինը և յանը ի հայտ եկան, սկիզբ առան երկու ձևերը: (Զոռու Դունյի. «Ճայծի դիագրամի բացադրություննը»)

լուն Ճ

Վիշապ

Չինական առասպելաբանության մեջ վիշապն առեղծվածային ու հաջողություն բերող կենդանի է, որի կերպարն ունի մի շարք կենդանիներին բնորոշ գծեր՝ ցի գլոխ, եղջյուրներ, ծովախսեցքետնի աչքեր, ավանակի բերան, մարդու մորուք, օձի մարմին և արծվի ճանկեր: Այն քայլում է, թռչում, լողում և նույնիսկ հավաքում ամպերն ու անձրև տեղում: Տիրապետում է անսահման գերբնական ուժերի և կարող է ցանկության դեպքում կերպափոխվել տարրեր արարածների: Որպես չինացիների հնագույն տոտեմներից մեկը՝ Յին և Հան դինաստիաներից հետո վիշապը դարձավ կայսեր կամ կայսերական տան խորհրդանիշ: Ավելի ուշ այն զարգացավ ու վերածվեց Հան էքնիկ խմբի և բոլոր չինացիների ընդհանուր հոգևոր և մշակութային խորհրդանիշի: Չինաստանում վիշապը միավորնան, իշխանության, հարգանքի, արժանապատվության, գերազանցության ու բարի բախտի խորհրդանիշ է, որն արևմտյան առասպելաբանության ու ավանդույթի մեջ հակադրվում է չար ու նախանձ վիշապին:

Մեջբերումներ

Ամենահզոր թեփուկավոր կենդանին՝ վիշապը, կարող է լինել թաքնված կամ երևացող, փոքր կամ հսկայական, կարճ կամ երկար: Գարնան գիշերահավասարին այն խոյանում է դեպի երկինք, իսկ աշնան գիշերահավասարին թաքնվում է խոր ջրերի մեջ: (Սու Շեն. «Դրի բացակրություն և դրահերի լուսաբանում»)

Վիշապը կարող է լինել մեծ կամ փոքր, կարող է նաև ճախրել կամ թաքնվել: Երբ մեծ է, բարձրացնում է ամպերն ու մառախող տարածում: Երբ փոքր է, բարցնում է մարմինն ու դառնում անտեսանելի: Երբ ճախրում է, բռչում է վեր, իսկ երբ թաքնվում է, իջնում է ջրերի խորքը՝ ալիքների մեջ: Իսկական հերոսը պետք է վիշապի նման լինի: (Լուս Գուանցուն. «Երեք բազակրությունների սիրավեպ»)

լուան շի ջին 亂世之音

Խառնակ դարաշրջանի երաժշտություն

Կոնֆուցիական գիտնականները հավատացած էին, որ երաժշտությունը փոխազդում է քե՛ հասարակության, քե՛ քաղաքական զարգացման հետ. այն նաև անդրադառնում է պետության քաղաքական ուժի վերելքի ու անկման, ինչպես նաև հասարակական ավանդույթների փոփոխության վրա: Եթե պետության մեջ գոյություն ունեն քաղաքական կոռուպցիա և հասարակական ցնցումներ, այդ պետության երաժշտությունն ու պոեզիան լի են զայրույթով ու բարկությամբ: Այսպիսի երաժշտություն և պոեզիա լսելով՝ կառավարիչը պետք է շտապ վերանայի կառավարման ոճը և վերացնի իշխանության շահագործումը՝ կործանումից խուսափելու համար:

Մեջբերումներ

Խառնակ դարաշրջանի երաժշտությունը լի է զայրույթով ու բարկությամբ և արտացղում է ժամանակի քաղաքական քառորդ: («Ծեսերի գիրքը»)

Ձեն և Ուեյ նահանգների երաժշտությունը խառնակ դարաշրջանի երաժշտություն էր: Ժամանակաշրջանն աչքի էր ընկնում կամայականություններով: Փուշոյ գետի ափերին խոյացած Սանձյանի երաժշտությունը բնորոշ էր անկում ապրող պետությանը: Կառավարությունն անգրძունակ էր, մարդիկ՝ տեղահանված, իսկ պաշտոնյաները դավաճանում էին կառավարչին ու եսասիրաբար հետապնդում էին իրենց շահը, և ոչ ոք չէր կարող խաճգարել նրանց: («Ծեսերի գիրքը»)

մինսին 民心

Ժողովրդի կամքը

Եզրույթը ցույց է տալիս որևէ երկրում, տարածաշրջանում ապրող մարդկանց գնահատողական դատողությունը կամ տեսակետը որևէ հիմնախնդիր, երևույթի կամ դեպքի վերաբերյալ, որն առնչվում է նրանց ընդհանուր շահերին և ունի լայն հասարակական նշանակություն: Հին չինացիները հաճախ «երկնքի իշխանությունը» համարում էին հիմք և բարձրագույն հասկացություն՝ քաղաքական իշխանության օրինականացման և քաղաքականության ձևավորման համար, բայց իրականում նրանք հաճախ «ժողովրդի կամքը» համարում էին «երկնքի իշխանության» հիմնական աղբյուր, բովանդակություն և դրսւորում: Նրանք սա նաև համարում էին երկրի կառավարման հիմնարար սկզբունք, և կարծում էին, որ ժողովրդի կամքի գոյությունը կամ բացակայությունն

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

են վճռում երկրի և քաղաքական իշխանության վերելքն ու անկումը, ինչպես նաև պետական գործերի զարգացումը: Սա այն առանցքային չինական գաղափարն է, ըստ որի ժողովորդն է պետության հիմքը: Բոլոր լուսավորական չինացի պետական գործիչներն անցյալում և ներկայում «ժողովրդի կամքը» համարել են կառավարման կարևորագույն գործոն:

Մեջքերումներ.

(Երկիրը նման է ծառի): Արմատը ժողովրդի կամքն է, որով որոշվում է տերևների աճն ու փարթամությունը: (Հոռիֆու. «Պատերազմող պեղությունների ժամանակաշրջանի բամբուկի լմակաշիվեր» գրից)

Երկինքը սիրում է մարդկանց և ընդունում նրանց ցանկությունները: («Պատմության զիրքը»)

Պետության իշխանությունը մեծանում է, եթե այն հաշվի է նստում մարդկանց կամքի հետ: Պետության իշխանությունը նվազում է, եթե այն ընդդիմանում է ժողովրդի կամքին: («Գուանցի»)

մինսին-ուեյբեն 民心惟本

Ժողովրդի կամքը պետության հիմքն է

Այն գաղափարը, ըստ որի ժողովրդի կամքը պետության հիմքն է կամ «արմատը», ծագել է Չան դինաստիայի թագավորի և Հոռիֆուի երկխոսությունից (տեքստը հայտնաբերվել է Պատերազմող պետությունների ժամանակաշրջանի բամբուկի մագաղաքների վրա): Հոռիֆուն ասում էր թագավորին. «Ժողովրդի կամքը նման է ծառի արմատների. չէ՞ որ նրանք են պահում տերևները»: Նա նկատի ուներ, որ հանրային աջակցությունը պետության հիմքն է, և առանց դրա պետու-

Զինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

թյունը կամ քաղաքական իշխանությունը կվերանա: Հին չինացիները հավատացած էին, որ կառավարությունն օրինական է այնքան ժամանակ, քանի դեռ այն «հետևում է երկնքի իշխանությանն ու հաշվի է նստում մարդկանց ցանկությունների հետ»: Ժողովրդի ցանկությունը երկնքի կամքի անհրաժեշտ պայման է, և պետության մեջ երկարատև կայունություն կլինի միայն այն ժամանակ, եթե այն հաշվի նստի ժողովրդի ցանկությունների հետ: Այս միտքը շատ նման է զաղափարին, որ ժողովուրդն է պետության հիմքը:

Մեջքերումներ.

Գոյություն ունի երկնքի տակ բոլորին հաղթելու մեկ ճանապարհ. եթե նվաճես ժողովրդի սիրտը, կնվաճես երկնքի տակ բոլորին: Կա մարդկանց հաղթելու մի ճանապարհ. եթե նվաճես նրանց սրտերը, կհաղթես նրանց: Գոյություն ունի նրանց սրտերը նվաճելու ճանապարհ. տուր նրանց այն, ինչ ուզում են, մի՛ պարտադրիր նրանց այն, ինչից նողկում են. ահա և վերջ. պարզից էլ պարզ է: (*Մեջքինս*)

Երկիր կառավարելը նման է ծառ տնկելուն: Եթե արմատներն ամուր են, տերևներն ու ճյուղերը կծաղկեն: (Ու Զին. «*Զենգուան քազավորության կարևոր քաղաքական գործերը»*)

Ժողովուրդն է պետության հիմքը: Եթե արմատներն ամուր չեն, ծառի ճյուղերն ու տերևներն էլ կթուլանան: (Ու Շունցին. «*Կայսեր հշակալին»*))

մին յի շի ուեյ բյան 民以食为天

**Սնունդն առաջնային նշանակություն ունի
մարդկանց համար**

Մարդիկ մեծ կարևորություն են տալիս սննդին: *Չի* (食 ու-տելիք) ընդհանուր եզրույթ է, որով նկատի են առնվում հիմնական ուսուրաները կամ նյութական պայմանները, որոնք կենսական նշանակություն ունեն մարդու կյանքում: *Թյանը* (天 երկինք) վերաբերում է ամենակարևոր երևոյթներին կամ հիմնական տարրերին, որոնք վճռում են ամեն ինչ: Հին չինացիները հավատացած էին, որ կառավարիչները ստիպ-ված էին ոչ միայն հասկանալ, որ հասարակ մարդիկ են կա-ռավարչի «երկինքն» ու պետության «իհմքը», այլև գիտակ-ցել, թե հասարակ մարդիկ ինչն են համարում «երկինք»: Ու-տելիքը հիմնական նյութական պայման է մարդկանց հա-մար՝ սննդելու, ընտանիքներն ապահովելու, խաղաղ կյանքով ապրելու և կայուն աշխատանքով գրաղվելու համար: Ան-շուշտ, այն նաև հիմնական նյութական պայման է կառավա-րող խմբի համար, որով նրանք հանդարտեցնում են մարդ-կանց և ապահովում նրանց ապրուստը: Երկիրը կառավա-րելու և ժողովրդին օգնելու նվազագույն պայմանը մարդ-կանց անհրաժեշտ սննդով և գոյատևման համար անհրա-ժեշտ հիմնական ուսուրաների պաշարով ապահովելն է: Սա իսկան պրագմատիկ քաղաքական հայեցակարգ է:

Մեջքերուսմներ

Լի Յիձին ասում էր. «Լսել եմ՝ նրանք, որ հասկանում են երկնքի ճանապարհները, կարող են կատարել արքաների գործը, իսկ նրանք, որ չեն հասկանում երկնքի ճանապար-հները, չեն կարող: Արքայական ճանապարհով առաջնորդ-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

վող կառավարիչների համար ժողովուրդը երկինք է, իսկ ժողովոյի համար երկինքը ուտելիքն է: (*«Հան դինաստիայի պալմություններ»*)

Ժողովուրդը պետության հիմքն է: Ուտելիքը երկինք է մարդկանց համար, իսկ հագուստը հաջորդ կարևոր գործոնն է: (*«Երեք բազավորությունների պալմություններ»*)

մինչու 民主

Ժողովրդի տերը / Ժողովրդավարություն

Եզրույթն ի սկզբանե վերաբերում էր ժողովրդի տիրոջը, այն մարդուն, որը կառավարում էր նրանց անունից, այսինքն՝ միապետին: Հետազայում եզրույթը վերաբերում էր նաև կառավարության պաշտոնյաներին: Հին ժամանակներում մարդիկ համարում էին, որ «Ժողովրդի տերը» «հետևում է երկնքի պատճամին ու հաշվի նստում մարդկանց ցանկությունների հետ»: Ժողովուրդը և նրանց տերը կազմում էին օրգանական ամբողջություն, ինչպես մարդու մարմինն ու սիրտը: Ժամանակակից Չինաստանում եզրույթը դարձել է «Ժողովրդավարության» չինական համարժեք և հիմնականում նշանակում է բոլոր մարդկանց պատկանող իշխանության հիմնարար սկզբունք, ինչպես նաև քաղաքական համակարգ ու հասարակական պայմաններ, որոնք հիմնված են այս սկզբունքի վրա: Ըստ Էության՝ ժողովրդավարությունը կառավարում է այն մարդկանց կողմից, որոնք ի վիճակի են իրացնել պետություն և հասարակություն ղեկավարելու իրավունքը, և ովքեր այս գործնթացում կարող են ազատորեն կարծիք արտահայտել և պաշտպանել իրենց շահերը: Ժողովրդավարությունը հիմնված է մեծամասնության կայացրած որոշման սկզբունքի վրա և հարգանքով է վերաբերվում նաև անհատների ու փոքրամասնության իրավունքներին:

Զինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Ժողովրդավարությունը ստեղծվել է՝ քաղաքացիների հասարակական կարգավիճակը պաշտպանելու համար: Այն մարդու իրավունքների սոցիալիզացված ձև է և առանցքային արժեքներից մեկը, որը նպաստում է լավ հասարակության ձևավորմանը:

Մեջքերումներ

Հին ժամանակներից ի վեր նա, ով կարող էր փրկել մարդկանց վտանգից ու արժանանալ նրանց հավատարմությանը, ժողովրդի տերն էր: (Փեյ Սունչի. «Երեք բազավորությունների պատմություն» գրքի ժանորագրություններ)

Ժողովրդով իր միապետ կառավարչին համարում է իր սիրտը: Կառավարչի համար մարդիկ ասես մարմին լինեն: Սիրտն ապահով է՝ մարմնի շնորհվ, բայց տառապում է, եթք մարմինը հիվանդ է լինում: Այդպես էլ ժողովրդն է պահպանում կառավարչին, իսկ եթես է թեքում նրանից, կառավարիչն անհետանում է: («Ծիսերի զիրքը»)

ցինցի-լիջու 清词丽句

Ուժ հաղորդող խոսքեր և սքանչելի արտահայտություններ

Եզրույթը վերաբերում է չափածոյին, որն աչքի է ընկնում օրիգինալ թեմայով, անկեղծ զգացմունքներով, հստակ պատկերներով և թարմացնող, ուժ հաղորդող գրելառով: «Ուժ հաղորդող/թարմացնող» եզրույթն այստեղ հակադրվում է զարդարում արտահայտություններին և չափազանց շատ գրական մեջբերումներին և նկատի է առնում թարմ ու բնական արտահայտությունները, ինչպես նաև նրբաճաշակ ոճը և նուրբ գեղագիտական ընկալումը: Այստեղ «սքանչե-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

լի» բառը չի նշանակում, որ շարադրանքը շքեղ է, այլ որ այն լիովին ազատ է գրեհկաբանությունից, իսկ պատկերավոր մտածողությունը սուր է իրական զգացումներով: Որպես բանաստեղծական եզրույթ՝ այն վերաբերում է բանաստեղծության ընդհանուր բնութագրին, այդ թվում և լեզվաբանական ոճին:

Մեջքերում

Բանաստեղծություններ գրելիս պետք է չմոռանալ անցյալի ականավոր բանաստեղծներին: Միևնույն ժամանակ ցանկալի է չանտեսել նաև ժամանակակից տաղանդներին: Ցանկացած բարձմացնող, բնական, տարրերվող ու տպավորիչ ստեղծագործություն պետք է մանրամասն ուսումնասիրել: (Դու Ֆու. «Ուրախ բառակողեր»)

Ժընմին-այու 仁民愛物

Սիրիր մարդկանց և փայփայիր ամեն ինչ

Եզրույթը նշանակում է սիրել մարդկանց և փայփայել աշխարհում ամեն ինչ: Այստեղ *ուլի* (物) բույսերն ու կենդանիներն են, իսկ *այլ* (愛) նրանց չափավոր ու պատշաճ օգտագործումն է: Գաղափարն առաջին անգամ առաջարկել է Սենցիուսը, որը տարրերակում էր բնական զգացմունքները հետևյալ կերպ՝ սեր ընտանիքի հանդեպ, խոր կարեկցանք այլ մարդկանց հանդեպ և բույսերն ու կենդանիներին փայփայելու ձգուում: Սիրել կարելի է մոտ ու հեռու մարդկանց, բայց առաքինի մարդը նախ սիրում է մոտ հարազատներին, ապա սերը տարածվում է այլ մարդկանց և ի վերջու աշխարհում ամեն ինչի վրա: Չնայած զգացմունքը սկսվում է ընտանիքի ներսում, այն պետք է դուրս գա ընտանիքի և նոյնիսկ

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

մարդկային ռասայի սահմաններից, ներառի նաև բույսերն ու կենդանիներին և դառնա լայն ու համապարփակ սեր: Նպատակն է՝ ներդաշնակության հասնել սեփական անձի հետ, մյուսների և բնության հետ: Զան Յայի հետևյալ գաղափարը՝ «բոլոր մարդիկ իմ եղբայրներն ու քույրերն են, բոլոր իրերն իմ ընկերներն են», շատ նման է այս մտքին:

Մեջքերումներ.

Մեծցիուսն ասում էր. «Առաքինի մարդիկ փայփայում են ամեն ինչ, բայց սա բարեգործ սեր չէ: Կարեկցում են ուրիշներին, բայց սա ընտանիքի հանդեպ սեր չէ: Առաքինի մարդիկ սիրում ու հոգ են տանում իրենց սիրելիների մասին: Հետևաբար, նրանք բարի են ուրիշների հանդեպ: Իսկ երբ բարի են մարդկանց հանդեպ, փայփայում են երկրի վրա ամեն ինչ»: (*Մեծցիուս*)

Ծննդյան պահին բոլոր մարդ արարածները, ըստ բնության օրենքների, օժտված են բնական միտումներով և իրենց ձևը ստանում են *ցի* կենսական ուժից: Ես ել նոյն ծագումն ունեմ, ինչ երկրի վրա ապրող բոլոր մարդիկ ու հազարավոր երևույթները: Եթե հետևեմ միայն իմ եսասիրական շահերին ու անտեսեմ մյուս բոլոր մարդկանց ու երևույթների հանդեպ սերը, ապա կմոռանամ մեր ընդհանուր ծագումն ու կկորցնեմ սեփական եսի զգացողությունը: (Յեն Գուոփան. «Նամակ-զգուշացում իմ որդիներին»)

սանբուսիու 三不朽

Քարոյական օրինակներ սահմանիր, մեծ գործեր արա ու ազնիվ գաղափարներ տարածիր

Եզրույթը վերաբերում է երեք մեծ ձեռքբերումներին, որոնք մշտապես հիշվում ու գովերգվում են նարդկանց կողմաց: Առաջին ու ամենակարևոր խնդիրը բարձր բարոյական չափանիշ սահմանելն է, որին պիտի հետևեն հետագա սերունդները: Երկրորդը գովասանքի արժանի արարքներ գործելն է, երկրին ու ժողովրդին բարիք բերելն ու չարիքն արմատախիլ անելը: Երրորդն ազնիվ գաղափարներ առաջարկելը կամ սահմանելն է, դրանք գրի առնելն ու դրանց մասին նուածելը: Հատ «Գարնան ու ամռան տարեգրերի Ցուոյի մեկնարանության»՝ այս մեծ գաղափարի հեղինակը Շուտուն Բատն է, Լու նահանգից: Ին Շուտոնի կարծիքով՝ անձնական բարիքները, որ ունեն անհատները կամ ընտանիքները, օրինակ՝ առողջություն, պաշտոնական և հասարակական կարգավիճակ, ժամանակի ընթացքում կանհետանան: Եվ միայն երկրին ու ժողովրդին օգուտ տվող մեծ ձեռքբերումները, այդ թվում և բարձր բարոյական չափանիշների սահմանումը, մեծ գործեր կատարելն ու ազնիվ գաղափարներ սերմանելը կպահպանվեն մի ողջ հավերժություն: Հին չինացի գրողները և ազնիվ ծգտումներ ունեցող մարդիկ ողջ կյանքի ընթացքում հետամուտ են եղել այս երեք մեծ գործի իրականացմանը:

Մեջքերում

Լսել եմ, որ ամենաազնիվ գործը բարոյական չափանիշ սահմանելն է: Երկրորդը՝ լավ գործեր անելը, իսկ երրորդը՝ ազնիվ գաղափարներ պաշտպանելը: Այս երեք գործերը հավերժական են, և մարդիկ երբեք չեն հրաժարվի դրանցից,

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ
նույնիսկ եթե շատ ժամանակ անցնի: («Գարման և աշնան
լրարեզրերի Յուոյի մեկնարանությունը»)

շանշուիշի

Բնապատկերային պոեզիա

Բնապատկերային (լանդշաֆտային) պոեզիան, ինչպես
անունն արդեն ենթադրում է, նկարագրում է բնապատկերի
գեղեցկությունն ու հմայքը, իսկ այս ոճի բանաստեղծներն
իրենց զգացմունքներն արտահայտում են գրավիչ բնա-
պատկերը փառաբանելու միջոցով: Բնապատկերային պոե-
զիան բնութագրվում է տեսարանների վառ նկարագրություն-
ներով, ճոխ ու թարմացնող լեզվով: Արևելյան Զին դինաստի-
այի գիտնականները, որոնք հյուսիսում թողել էին պատե-
րազմից կեղեքված իրենց տները, սփոփանք ու փրկություն
էին փնտրում հարավում, բնության գրկում, և սա արտացոլ-
վում էր սարերի ու գետերի տեսարանների բանաստեղծա-
կան նկարագրություններում: Այս բանաստեղծական ոճի
հիմնադիրը Արևելյան Զին դինաստիայի ուշ շրջանի և Հա-
րավային դինաստիաներից Սուն դինաստիայի վաղ շրջանի
մեծ բանաստեղծ Սիե Լինյուն է: Նա ներմուծեց բնական գե-
ղեցկության պատկերումը պոեզիայի մեջ՝ պոեզիան ազա-
տելով քաղցրախոսությունից և անշոնչ բարոյախրատա-
կան երանգներից: Բնապատկերային պոեզիան, որը հետա-
գայում զարգացրին Սին Թիառն, Հե Սունը, Ին Ջենը և մյուս-
ները, վերածվեց կարևոր գրական դպրոցի: Այն մեծ տարա-
ծում գտավ Թան դինաստիայում, հատկապես Թանի ծաղ-
կուն շրջանում, երբ ի հայտ եկան այնպիսի բնապատկերա-
յին բանաստեղծներ, ինչպիսիք են Ռուն Ռուեյն ու Մեն Հառ-
րանը: Թան դինաստիայի բանաստեղծներ լիու Չանցինը,
Ռուեյ Ինուն և Լիու Յունյուանը նույնպես հայտնի դարձան

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

բնապատկերային բանաստեղծություններով: Սա զարկ տվեց պոեզիայի մեջ արտահայտության նոր ձևին և գեղագիտական գնահատման նոր միտումին:

Մեջրերում

Հարավային դինաստիաներից Սուն դինաստիայի վաղ շրջանի գրականությունն ու պոեզիան որոշ փոփոխություններ կրեց. մետաֆիզիկական պոեզիան, որն արտահայտում էր Լանցզի և Չուանցիի գաղափարները, նահանջում էր, իսկ բնապատկերային պոեզիան մեծ մասսայականություն էր վայելում: Բանաստեղծները երբեմն մեկ տեսարան նկարագրելու համար օգտագործում էին զուգահեռ արձակի հարյուրավոր բառեր կամ մրցում էին միմյանց հետ անտվոր տողեր գրելու տաղանդով: Տեսարանները նկարագրելիս փորձում էին պատկերել բոլոր մանրամասները. գրական երկ ստեղծելիս տանջում էին իրենց միտքը՝ որևէ արտասովոր պատկեր ստանալու համար: Սա դարձել էր գրական ստեղծագործության տարածված միտում: (Լիու Սյե. «*Գրական միտքն ու Վիշապներ քանդակելը»)*

շանքուն 尚同

Զգուել դեպի վեր

Եզրույթը նշանակում է ճիշտ և սխալի չափանիշներ սահմանելիս ձգտել լավագույնին: Սա մոհիստուկան դպրոցի հիմնական դիրքորոշումներից է: Մոուցին հավատացած էր, որ պետության և քաղաքական իշխանության բացակայության դեպքում անորոշությունն այն հարցի շուրջ, թե ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ, կարող էր հակամարտության ու կռվի պատճառ դառնալ՝ ի վերջո վնաս հասցնելով հակառակորդ-

Անրին: Հետևաբար, նա պնդում էր, որ արժանի ու տաղանդավոր մարդիկ պետք է լինեն Երկնքի որդին ու նրա ներկայացուցիչները կյանքի զանազան ոլորտներում: Խոսքի և գործի մեջ ճիշտն ու սխալը դատելիս բոլորը պետք է համապատասխանեն բարձր չափանիշների, և ի վերջո հետևեն կառավարչի չափանիշներին: Սիապետ կառավարիչն էլ իր հերթին պիտի ենթալկվի Երկնքի կամքին: Մոհիստները հավատացած էին, որ բարձրագույն չափանիշներին համապատասխանելը կարևոր միջոց է երկնքի տակ կարգուկանոն հաստատելու համար:

Մեջրերում

Դու էլ պիտի պնդես այն, ինչ պնդում է քո վերադասը: Եվ մերժես այն, ինչ նա մերժում է: Եթե լավ գաղափար ունես, զնա վերադասիդ մնու ու առաջարկիր: Եթե վերադասդ սխալ քայլ է անում, խրատիր նրան ու հանդիմանիր: Դու պիտի ձգտես հասնել վերադասին, և ոչ քե ենթականերիդ: (*Սոուցի*)

շանսյան 尚賢

Մեծարիր արժանին

Հին Չինաստանում մտքի բազմաթիվ դպրոցներ պաշտպանում էին «արժանին մեծարելու» և նմանատիպ այլ գաղափարներ: Նրանք իշխանավորներին խնդրում էին աշխատանքի վերցնել արժանավոր և ունակ մարդկանց և արդյունավետ կերպով օգտագործել նրանց տաղանդը կառավարման ոլորտում՝ նրանց շնորհելով քաղաքական իշխանություն և նշանակելով պաշտոնների, որոնք համապատասխանում էին նրանց առաքինությանը: Առաքինությունն ու տաղանդը պետք է լինեին պաշտոնյա ընտրելու առաջին ու

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

կարևորագույն չափանիշը: Կոնֆուցիականների կարծիքով՝ հարազատների հանդեպ սիրուց և հոգածությունից զատ պետք է նաև աջակցել առաքինի և ունակ մարդկանց: Սոհիստների համար առաքինի և ունակ մարդկանց աջակցելը «դեպի վեր ձգտելու» ոճով կառավարման կարևոր նախադրյալ էր:

Մեջքերումներ.

Այսպիսով, պետք է մեծարել արժանիներին և աշխատանքի մեջ ներգրավել ունակներին, տարբերակել բարձր և ցածր խավերը, հեռուն ու մոտիկը, աստիճանակարգել տարեցին ու երիտասարդին: («*Սունացի*»)

Այսպիսով, իին ժամանակներում իմաստուն արքաները մեծ ուշադրություն էին դարձնում արժանիներին մեծարելու սկզբունքին: Նրանք աշխատանքի մեջ ներգրավում էին առաքինիներին և ունակներին, չին կազմում խմբեր միայն հայրերից ու եղբայրներից, կողմնակալ վերաբերմունք չին ցուցաբերում հարուստներին ու ազնվականներին, և ոչ էլ գեղիկ հատկանիշներ էր վերագրում նրանց: («*Սոնոցի*»)

Հենշեն 生生

Անվերջ աճ և փոփոխություն

Եզրույթը նշանակում է հավիտենական, անվերջ փոփոխություն: Ըստ «Փոփոխությունների գորի»՝ եթե շենշենը (生生) այստեղ նշանակում է շարունակական աճ և հավերժական փոփոխություն, ապա այն կարելի է հասկանալ երկու մակարդակով: Նախ, բոլոր իրերի գոյության տեսանկյունից, սա ինի և յանի փոխազդեցությունն է, որն առաջ է տանում ծննդի, վերածննդի ու երկնքի, երկրի ու բոլոր

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Երևոյթների փոփոխության անվերջ գործընթացը: Այս գործընթացը տիեզերքի հիմնարար հատկությունն է և երիկական վարքագծի աղբյուրը: Երկրորդ, որպես գուշակության մեջ օգտագործվող եզրոյթ՝ այն վերաբերում է ինի և յանի հաջորդականությանը, վեցագիր տողերին և այն փաստին, որ «Փոփոխությունների գորքի» խորհրդանիշային համակարգի բոլոր տարրերը մշտապես փոփոխության մեջ են:

Մեջքերումներ

Հավերժական փոփոխության մեջ մի սերունդը ծնունդ է տալիս մյուսին: («Փոփոխությունների գիրքը»)

Շարունակական աճն ու հավերժական փոփոխությունը երկնքի էությունն է: Երկինքը հետևում է այս սկզբունքին, և բարությունն էլ առաջնորդվում է այս սկզբունքով: («Զի՞ն եղայունների սրբեղծագործությունները»)

Չեն Թան ջի յին 盛唐.

Թան դինաստիայի ծաղկման շրջանի պոեզիան

Եզրոյթը վերաբերում է Թան դինաստիայի Սուանցուն կայսեր կառավարման Կայուան (713-742) և Թյանքան (742-756) շրջանների պոեզիային՝ համեմատած Թան դինաստիայի վաղ, միջին և ուշ շրջանների բանաստեղծական ստեղծագործությունների հետ: Այս ժամանակաշրջանը, որն աշքի էր ընկնում լավ կառավարմանք, բարգավաճմանք ու կայունությամբ, ուշեւ ժամանակաշրջան էր Թան մեծ կայսրության համար, որից հետո այն ընդհատվեց Ան Լուշանի և Շի Սիմինի ապստամբությամբ: Տեղի ունեցավ հյուսիսի ու հարավի մշակութային խաչասերում. այս շրջանում ուղևորությունները հաճախակի բնույթ էին կրում: Սա հնարավո-

Զինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

լուրջուն տվեց, որ գեղարվեստական ստեղծագործությունը ծաղկի: Բանաստեղծական արարման չորս ժամանակաշրջաններից՝ վաղ Թան դինաստիա, Թան դինաստիայի ծաղկման շրջան, Թանի միջին շրջան և Թան դինաստիայի ուշ շրջան, Թան դինաստիայի ծաղկուն շրջանն ամենակարճն էր տևողությամբ, բայց և ամենանշանավորն էր գեղարվեստական ձեռքբերումների առումով: Այս ժամանակաշրջանում ի հայտ եկան լեզենդար բանաստեղծ Լի Բայն ու հանձարեղ բանաստեղծ Դու Ֆուն, ինչպես նաև ականավոր բանաստեղծների մի ողջ աստղաբույլ՝ Չան Յուե, Չան Ուուսու, Չան Ջիուլին, Սեն Հառան, Ուան Ուեյ, Գան Շի, Ցեն Շեն, Ուան Չանլին, Ուան Ջիհուան, Յույ Հառ, Լի Ֆի և Ուան Հան: Այս բանաստեղծները փառաբանում էին բնապատկերները, արտահայտում էին ազնիվ ձգտումներ ու պատկերում էին իրական կյանքը: Նրանց գրելառջը թե՛ եռանդով լի էր, և թե՛ անբռնագրոս: Նրանք լայն մտահորիզոն ունեին և կարողանում էին օգտագործել բարմ, բնական լեզու: Նրանց բանաստեղծությունները լի էին ուժով, եռանդով և նախաձեռնողականությամբ: Ըստ Էռլյան, նրանց երկերը դասական չինական պոեզիայի բարձրագույն նվաճումն են: Այս ժամանակաշրջանն աչքի էր ընկնում նաև բնապատկերային դպրոցի և չափած ստեղծագործությունների սահմանային դպրոցի հիմնադրմամբ:

Մեջքերումներ

Թան դինաստիայի ծաղկման շրջանի շատ բանաստեղծների ստեղծագործություններ ապշեցնում էին ընթերցողներին հուզիչ, հզոր արտահայտչականությամբ և պարզ, բայց միևնույն ժամանակ ծանրաբար ոճով, որը հիշեցնում էր Յան Ջենցինի վայելչագրությունը: (Յան Յու. «Պալասիսանական հորեղբայր Ու զինսիսական Լինանում»)

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Թաճ դինաստիայի ծառկման շրջանում պրեգիան աչքի էր ընկնում արտահայտիչ, հանդարտ ու բնական ոճով, որը ճախրելու և սափառնելու զգացողություն էր ստեղծում: (Հու հնին. «Պոեզիայի խոր ուսումնասիրություն»)

շի դե շե չան, շի լի շե ուան 恃德者昌, 恃力者亡

Առաքինությանն ապավինողները կրարգավաճեն.
ուժին ապավինողները կկործանվեն

Քարոյական ուժին ապավինելը կրերի բարեկեցություն, իսկ բռնությանն ապավինելու դեպքում կործանումն անխուսափելի է: Արտահայտությունը նկարագրված է «Պատմաբանի արձանագրություններում» և մեջբերված է «Պատմության գրքից»: *Դհն (德) բարքերն են, գրավչությունն ու ազնւությունը, լիմ (力) հարկադրանքը, բռնությունն ու ուազմական ուժը:* Կոնֆուցիական դպրոցի քաղաքական և էթիկական սկզբունքների ազդեցության ներքո հին ժամանակներից ի վեր չինացիները պաշտպանում են այն միտքը, որ կառավարիչը պետք է կառավարի միայն առաքինությամբ (այսինքն՝ գրավի մարդկանց սրտերը բարեսրտությամբ)` և ոչ թե կառավարի ուժով (մարդկանց վրա ուժ բանեցնի), և հավատացած էին, որ միայն բարեգործությանն ապավինելով կառավարիչը կարող է նվաճել մարդկանց սիրտն ու միտքը, ինչն էլ կիանգեցնի դրական փոխազդեցության և բարեկեցություն կրերի: Ուժով կառավարելը, մյուս կողմից, մարդկանց կիարկադրի հնազանդելը, բայց չի հասնի անկեղծ ու երկարատև ներդաշնակության ու միասնության: Այս սկզբունքը գործում է ոչ միայն մարդկանց կամ երկիր դեկավարելիս, այլև երկրների միջև հարաբերությունները կարգավորելիս: Որպես միջազգային հարաբերությունները կարգավորելու սկզբունք՝ եզրույթը ենթադրում է, որ առանց պատճառի ուազմական գործողություններում ներգրավվելը կամ

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

այլոց համբեայ գերիշխանություն հաստատելու վորձերն անհամատեղելի են քաղաքակրթության զարգացման հետ: Միայն բարոյական սկզբունքները պահպանելու և միմյանց վստահելու դնարում աշխարհում կհաստատվի կայուն խաղաղություն և անվտանգություն:

Մեջքերումներ

Առաքինությունն այն հիմքն է, որը պահում է պետությունն ու ընտանիքը: Միայն այս հիմքի վրա պետությունը և ընտանիքն անպարտելի կլինեն: («Յուոյի մեկնարանությունները «Գարնան և աշնան լրարեգրերի» մասին»)

Մենցիուսն ասում էր. «Նրանք, որ ուազմական ուժը կիրառում են բարեգործության անվան տակ, կարող են կառավարել դրսերի ու արքայազնների թագավորությունները, բայց դրան հասնելու համար ստիպված են հույսը դնել հզոր ուազմական ուժի վրա: Մինչդեռ նրանք, որ ապավինում են բարոյական ուժին և բարյացականությանը, կարող են հաղթել բոլոր մարդկանց՝ անկախ ուազմական ուժից... Երբ ժողովրդին ստիպում ես պահպանել բարոյական սկզբունքները, նրանք, միևնույն է, ի սրտե չեն հետևում կառավարչի խոսքին: Ավելին, ուղղակի հճազանդվում են, որովհետև դիմադրելու ուժ չունեն: Միայն կառավարելու ընթացքում բարոյական ուժին ապավինողները կվայելեն մարդկանց անկեղծ ու սրտանց աջակցությունը»: («Մենցիուս»)

Երկիրը և ժողովրդին կառավարելիս չկա ավելի կարևոր քան, քան բարեգործությունն ու բարոյականությունը: Բարեգործության և բարոյականության առկայության դեպքում մարդիկ կինազանդվեն առանց որևէ ֆինանսական կամ նյութական դրդապատճառների: Զարիքը կկասեցվի, և պատժի կարիք չի լինի: («Տեր Լյուի գարնան և աշնան լրարեգրությունները»)

սիսյան 四象

Չորս պատկեր

Եզրույթը նշանակում է չորս պատկեր (կամ դրանց բնույթ գծերը), որոնք առաջանում են ուր եռագրերի ձևավորման ընթացքում՝ երկու ձևի տրոհման միջոցով: Ինչպես բացատրվում է «Փոփոխությունների գրքում», «Փոփոխությունները ներառում են բայչին (太极 ամենածայրահեղը), որից առաջանում է երկու ձև: Երկու ձևերը ստեղծում են չորս պատկեր, իսկ չորս պատկերները՝ ուր եռագիր»: Չորս պատկերները տարրերվում են միմյանցից, բայց միևնույն ժամանակ փոխկապակցված են: Հին գիտնականները համաձայնության չեն գալիս այն առումնվ, թե ինչ են խորհրդանշում այս չորս պատկերները: Բոլոր երևույթների ստեղծման տեսանկյունից չորս պատկերները, հնարավոր են, նշանակում են տարրվա չորս եղանակները՝ գարուն, ամառ, աշուն և ձմեռ, կամ չորս հիմնական տարրերը՝ մետաղ, փայտ, ջուր և կրակ: Ըստ մյուս բացատրության՝ որպես գուշակության եզրույթ, չորս պատկերները գուցե չորս ցողուններն են, որոնք բաժանվում են բախտագուշակության ժամանակ, կամ չորս քննութագրերն են, որոնք դարձյալ կիրառվում են գուշակության մեջ՝ ավելի մեծ ին, ավելի մեծ յան, ավելի փոքր ին և ավելի փոքր յան:

Մեջրերումներ

Գուշակության ժամանակ օգտագործվող ցողունների ընդհանուր թիվը հիսուն է, որոնցից քառասունինն է օգտագործվում: Դրանք բաժանվում են երկու խմբի, որոնք ներկայացնում են երկու ձև: Խմբերից մեկից մի ցողուն է հեռացվում. այն խորհրդանշում է երեք պատկեր՝ երկինք, երկիր,

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

մարդ, իսկ մյուսները չորս-չորս խճբավորվում են՝ ներկայացնելով տարվա չորս եղանակները: («Փոփոխությունների գիրք»)

Չորս պատկերները, որոնք ստեղծվել են երկու ձևերից, խորհրդանշում են մետաղ, փայտ, ջուր և կրակ: Նրանք կյանքի են կոչվում շնորհիվ երկնքի ու երկրի, և հետևաբար, համարվում է, որ դրանք են ստեղծում չորս պատկեր: (Կուն Ինդա. «Փոփոխությունների գրքի» ճշմարիկ նշանակությունը)

Թայկանթի 太康体

Թայկան գրական ոճը

Արտահայտությունը վերաբերում է բանաստեղծական ոճի, որը մասսայականություն էր վայելում մոտ 30 տարի՝ սկսած միջինարևմտյան Զին դինաստիայի վաղ շրջանից, մասնավորապես Թայկան դարաշրջանում (280-289)` Ու կայսեր թագավորության ընթացքում: Այս ավանդույթի բանաստեղծներից էին Ցուռ Սին, Փան Ցուեն և Լու Զին: Թայկան շրջանի բանաստեղծները հիմնականում կենտրոնանում էին հոեսորական նկարագրության, խոսքային զուգահեռականության և հղված բանաստեղծական տեխնիկայի կիրառման վրա, որը խիստ տարբերվում է Զյան՛ան պոեզիայից իր կրքով, խիզախությամբ ու կենսունակությամբ: Թայկան շրջանի բանաստեղծներից աշքի էր ընկնում հատկապես Ցուռ Սին, որն օգտվում էր պարզ լեզվից, բայց որի ստեղծագործությունները հետաքրքիր բովանդակություն ունեին, հազեցած էին կրքով և ուժով:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Մեջբերում

Արևմտյան Չին դինաստիայի Թայկան ժամանակաշրջանում գլուխականները, նասնավորապես՝ Չան Ցայը, Չան Սիեն, Չան Քանը, Լու Չին, Լու Յունը, Փան Յուեն, Փան Նին ու Յուն Սին, վերակենդանացրին Չյան՛ան ժամանակաշրջանի գլուխական ժառանգությունը՝ գնալով այդ ժամանակաշրջանի վարպետների հետքերով։ Ժամանակաշրջանն ազդարուում էր Չյան՛ան ոճի շարունակությունն ու գեղեցկությունը, ինչպես նաև պոեզիայի վերածնունդը (Չուն Ռուն. «Պոեզիայի քննադարություն»)

թի 悌

Եղբայրական պարտականություն

Եղբայրական պարտականությունը հնագանդությունն է ավագ եղբորը, ինչպես նաև սերն ու հարգանքը նրա նկատմամբ։ Դրա համար կրտսեր եղբայրը պետք է հետևի ավագ եղբոր կարգադրություններին ու հրամաններին։ Եղբայրական պարտականությունը պետք է արմատավորվի կրտսեր եղբոր հանդեպ անկեղծ սիրուց ու հարգանքից։ Կոնֆուցիականները հաճախ խոսում են «եղբայրական պարտականության» և «որդիկան բարեպաշտության» մասին՝ հավատալով, որ այդ երկու գործոնները բարոյականության և ընտանեկան էթիկայի պահպանման և ուժեղացման, իսկ երբեմն նաև՝ քաղաքական կարգուկանոնի հիմքն են։

Մեջբերումներ

Յուուցին ասում էր. «Որդիկան բարեպաշտությունն ու եղբայրական պարտականությունը պահպանողներից քչերն

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

Են վիրավորում իրենց ավագներին: Իսկ ավագներին չվիրավորողները հակված չեն խնդիրներ առաջացնել ուրիշների կյանքում: Առաջինի մարդը պահպանում է լավ վարքագծի սկզբունքները: Այդ դեպքում խոսքն ու գործը կառուցվում են բարոյական սկզբունքների համաձայն: Որդիական բարեպաշտությունն ու եղայրական պարտականությունը բարյացակամության հիմքն են»: («Զրուցներ և ասույթներ»)

Որդիական բարեպաշտությունը կիրառվում է նաև միապետին ծառայելիս: Եղայրական պարտականությունը կիրառվում է ավագներին ու բարձրաստիճան պաշտոնյաներին ծառայելիս: Կարեկցանքը կիրառվում է հասարակ ժողովրդին ուղղորդելիս: («Ծիսերի զիրքը»)

թյանձին-դիյի 时地利人和

Բնական օրենքներ և ճշտապահություն

Եզրույթը տառացիորեն նշանակում է երկնքի ու երկրի օրենքներ ու ճշտապահություն: Ըստ «Գարնան և աշնան տարեգրերի Յուոյի մեկնաբանության՝ Յիշանն առաջարկում էր այս հասկացության միջոցով բացատրել ծեսերի հությունը: Յիշանը հավատում էր, որ երկնքի ու երկրի շարժումները հետևում են հավերժական օրենքներին, որոնք առաջ էին բերում հետևողական ու ռացիոնալ կարգ: Մարդը նույնական պարտավոր է կանոնավոր, ռացիոնալ և պատշաճ ձևով հետևել այս սկզբունքին խոսքի ու խոսքի մեջ: Այն սահմանափակումները, որ ծեսերը դնում են մարդու վարքի վրա, և դրանց արդյունքում ստեղծված հասարակական էթիկան և ներդաշնակությունը բնության օրենքների դրսերումներն են: Հետազայում արտահայտությունը նշանակում էր նաև այն ամենը, ինչ պատշաճ է, կամ ցանկացած փաստարկ, որն արդարացված է:

Մեջբերում

Ծեսերն իրականում երկնքի ու երկրի շարժումն են, ինչպես նաև մարդկանց բարյական վարքագիծը կառավարող օրենքներն են: («Գարման և աշնան պարհագրերի Յույի մելնարանությունը»)

բյանշի դիլի ժընհե 天时地利人和

**Բարեպատեհ ժամանակ, աշխարհագրական
առավելություն և ժողովրդի միասնություն**

«Բարեպատեհ ժամանակը», որն ի սկզբանե վերաբերում էր պատերազմի ընթացքում բարենպաստ եղանակին, առհասարակ վերաբերում էր ժամանակային տարրեր առավելություններին, այդ թվում՝ եղանակ, ժամանակի ընտրություն, հնարավորություն և այլն: «Աշխարհագրական առավելություն» արտահայտությունը, որն ի սկզբանե վերաբերում էր ճակատամարտի ընթացքում գրաված նպաստավոր դիրքերին, այժմ վերաբերում է ընդհանրապես զանազան բարենպաստ հասուկ պայմանների, ներառյալ տեղանք, դիրք, տեղադրություն և այլն: «Ժողովրդի միասնություն» արտահայտությունը, որն ի սկզբանե վերաբերում էր ընդհանուր աջակցությանը, տարբեր խավերի մարդկանց միավորմանն ու հասարակական համերաշխությանը, այժմ նշանակում է ընդհանրապես առավելություններ: Հնում չինացիները հավատում էին, որ սրանք են հաջողության երեք կարևորագույն գործոնները: Այս երեք գործոններից մասնավորապես «Ժողովրդի միասնությունը» որոշիչ դեր ունի, որովհետև «Բարեպատեհ ժամանակը» աշխարհագրական առավելությունից պակաս կարևոր է, իսկ աշխարհագրական առավելությունը ժողովրդի միասնությունից պակաս կարևոր է:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Ասացվածքն արտացոլում է այն երեք հիմնական գործոնները, որոնք կարևոր նշանակություն ունեն չինացիների համար՝ ժամանակ (հնարավորություն), տարածություն (շրջապատ) և նարդիկ: Այն արտացոլում է մարդակենտրոն մտածողությունը:

Մեջքերումներ

Բարենպաստ եղանակային պայմանները, աշխարհագրական առավելություններն ու ժողովրդի միասնությունը պետք է մեկտեղվեն: Դրանց բացակայության դեպքում հաղթանակը ձեռք կրերվի շատ թանկ զնով: (*«Սուն Բինի պարերազմի արվիսպը»*)

Բարենպաստ եղանակային պայմաններն աշխարհագրական պայմաններից պակաս արժեքավոր, իսկ բարենպաստ աշխարհագրական պայմանները ժողովրդի միասնությունից պակաս արժեքավոր գործոն են: (*Սենցիոն*)

թյանսիա-ուեյզուն 天下为公

Աշխարհը պատկանում է բոլորին

Աշխարհը հանրային ոլորտ է և, հետևաբար, պատկանում է բոլոր մարդկանց: *Թյանսիան* (天下), որը բառացի նշանակում է երկնքի տակ ամեն ինչ, նախկինում նշանակում էր միապետ, պետական իշխանություն կամ ազգ. հետագայում իմաստային շրջանակներն ընդլայնվեցին, և այժմ այն նշանակում է «ամբողջ աշխարհը»: Նեղ իմաստով *զուն* (公) բառը վերաբերում է մարդկանց, որոնք օժտված են ազնվությամբ և իմացությամբ, մինչդեռ լայն իմաստով այն վերաբերում է երկրի բոլոր մարդկանց կամ աշխարհում ապրող բոլոր մարդկանց: Եզրույթն ունի երկու իմաստ: Առա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ջիմն այն է, որ կառավարչի դիրքը մեկ մարդու կամ նրա ընտանիքի մասնավոր սեփականությունը չէ, այլ պատկանում է առաքինությամբ և ընդունակություններով օժտված բոլոր մարդկանց: Հետևաբար, զահը պետք է փոխանցվի ըստ արժանիքների, և ոչ թե սերնդեսերունդ: Երկրորդ իմաստն այն է, որ երկիրը չի պատկանում միայն մեկ անհատի կամ ընտանիքի, այլ ողջ հանրությանը: Սա ժողովրդակենտրոն տեսլականն է, որը հակադրվում է ժառանգական կառավարմանը, և ըստ որի՝ իշխանության պիտի զան միայն առաքինի և բանիմաց մարդիկ: Հին չինացիները պնդում էին, որ հենց սա է այն հիմքն ու երաշխիքը, որի շնորհիվ մարդիկ կարող են երջաններ կյանք վայելել և հասնել համընդհանուր ներդաշնակության: Մեր ժամանակներում այն զարգացել ու վերածվել է առանցքային հասկացության, որը կոչ է անում տապալել ինքնակալությունը և հաստատել ժողովրդավարություն, ապա՝ ձգտել իդեալական հասարակություն:

Մեջքերում

Քանի դեռ Մեծ պատը գերիշխող դիրք ունի, աշխարհը պատկանում է բոլոր մարդկանց: Առաքինությամբ և իմացությամբ օժտված մարդիկ ընտրվում են՝ երկիրը կառավարելու համար, իսկ անկեղծությունն ու ներդաշնակությունը մարդկանց օգնում են շփվել: («Ծիսկի զիրքը»)

բյանյուանչի 田园诗

Հովմերգական պոեզիա

Արևելյան Չին դինաստիայից Թառ Յուանմինի ստեղծած ժանրը՝ հովմերգական պոեզիան պատկերում է գյուղական կյանքն ու բնապատկերը: Թառ Յուանմինը, որի ամե-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

նասիրելի թեման գյուղական կյանքն էր, պարզ լեզվով էր նկարագրում գյուղական տեսարանները: Նրա բանաստեղծություններն ամենահաճախակնոտ, թարմ շունչ բերողն ու բնականն էին, ատեղծում էին հեռուն տանող գեղագիտական հայեցակարգ և հավերժական հմայք: Հովվերգական պոեզիան դասական շինական պոեզիայի մի նոր փուլ էր, որը պայմանավորեց բանաստեղծական զարգացումը Վեց դինաստիաների ժամանակաշրջանում և դրանից հետո:

Մեջքերում

Սիե Լինյունի բանաստեղծությունները լի են խոր ներիմաստմերով, բայց հիմնականում ներկայացնում են սարերի ու ջրերի տեսարաններ, իսկ Թառ Յուանմինի բանաստեղծությունները գեղանի են ու պարզ և գերազանցապես գյուղական տեսարաններ են: (Բայ Զույի. «Նամակ Յուան Չելին»)

Ուանյուեփայ 婉约派

Ուանյուե դպրոց / Գեղանի և զուսպ դպրոց

Որպես Սուն դինաստիայի երկու *ցի* (词) լիրիկական դպրոցներից մեկը՝ գեղանի և զուսպ դպրոցը հիմնականում առնչվում էր ռոմանտիկ սիրո կամ բաժանման վշտի թեմաներին: Այն քնութագրվում էր հիմնականում մարդու զգացմունքների սենտիմենտալ և նրբերանգային արտահայտությամբ, մեղմ ու մեղեղային հանգավորմամբ և հյութեղ ու նուրբ լեզվի կիրառությամբ: Այս դպրոցի ցի քնարերգությունն առաջացել էր ավելի վաղ, և բազմաթիվ բանաստեղծներ արդեն իսկ ճանաչում էին վայելում ցի ոճով ստեղծագործելու համար, նրանցից էին մասնավորապես Վեն Թին-

յուն և Լի Յուն Հինգ դիմաստիամերի ժամանակաշրջանից, Օույան Սիուն, Յան Շուն, Յան Ջիդանն, Լիու Յունը, Ցին Գուանը, Հե Ջուն, Ջոու Բանյանը և Լի Ցինչառն Հյուսիսային Սուն դիմաստիայից, ինչպես նաև Չյան Կույը, Ու Ուենինը և Չան Յանը Հարավային Սուն դիմաստիայից: Պոեզիայի զարգացման ավելի քան հազար տարվա ընթացքում նրագեղ և զուսակացող գերիշխող դիրք էր զրավում թե՛ որակի, թե՛ քանակի առումով: Հարկ է նշել, որ այս դպրոցի բանաստեղծները նաև խորապես մտահոգված էին ազգի ճակատագրով, քայլ ձգտում էին արտահայտել իրենց մտահոգություններն անհատական և զգայական դաշտում, հաճախ բնապատկերների միջոցով: Հետևաբար, չի կարելի ասել, որ նրանց բանաստեղծությունները զուրկ են կենսունակությունից և էներգիայից:

Մեջքերումներ

Որոշ ցի բանաստեղծություններ նրբագեղ էին ու զուսպ, մյուսները՝ խիզախ և ճոխ: Առաջին խմբի բանաստեղծությունները զրվում էին մանրամասն ոճով, երկրորդինը՝ հզոր ու անրոնազբոս: Դրա պատճառը բանաստեղծների խառնվածքի տարբերությունն էր: Ցի բնարերգությունը ներկայացնում էր մարդու զգացմունքները, իսկ նրբագեղ ու զուսպ դպրոցը ցի բնարերգության մի ճյուղն էր: (Սու Շիցեն. «Դիմարկումներ դարբեր ոճերի մասին»)

Լի Ցինչառն ցի պոեզիայի գեղանի ու զուսպ դպրոցի լավագույն բանաստեղծուիկն էր: Իսկ Սին Ցիջին խիզախ ու ճոխ բանաստեղծական դպրոցի լավագույն ներկայացուցիչն էր: Այս տեսակետը, որն ինքնին կարևոր է, չի հիշատակվում Սին դիմաստիայի գրաքննադատների կողմից (Շեն Ցենջի. «Խառը նորեր Ցի լիրիկայի մասին Զունգի սլրուղիայից»)

ուան գուռ ջի յին 亡国之音

Կործանվող պետության երաժշտություն

Նկատի է առնվում այն պետության երաժշտությունը, որը մասնատման եզրին է: Հետազայում այն նաև վերաբերում էր անկումային և բարոյալքված երաժշտությանը: Կոնֆուցիական տեսակետի համաձայն՝ քայլայման եզրին գտնվող պետության երաժշտությունը պետք է լինի ճնշող ու բարոյալքող: Եթե հարստահարված ժողովուրդը սարսափելի տառապանք էր կրում, նրա երաժշտությունն ու պոեզիան նույնապես լի էր վշտով ու դառնությամբ: Եթե կառավարիչը կորցնում էր իրականության զգացումը, նրա պետության կործանումն անխուսափելի էր:

Մեջբերումներ.

Կործանման եզրին կանգնած պետության երաժշտությունը լի է տիսրությամբ, ինչն էլ ցույց է տալիս, որ ժողովուրդը սարսափելի ծանր վիճակում է: (*«Ծնուրի զիրքը»*)

Ձեն և Ուեյ նահանգների երաժշտությունը վայրիվերումների դարաշրջանի երաժշտություն էր: Փուշոյ գետի վրա տարածվող Սանձյանի երաժշտությունը բնորոշ էր կործանվող պետությանը: Կառավարությունն անգործունակ էր, ժողովուրդը՝ տեղահանված, իսկ պաշտոնյաները խարում էին կառավարչին ու հետապնդում միայն իրենց եսասիրական շահը, և ոչ ոք ի զորու չէր դադարեցնել դա: (*«Ծնուրի զիրքը»*)

ուուեյ էրջի 无为而治

Կառավարիք չ-գործությամբ

Այստեղ *ջի* (微) նշանակում է լավ կառավարվող պետություն. *ուուեյ* (无为而治 չ-գործություն) չի նշանակում ոչինչ չանել, այլ գործել ոչ պարտադրողաբար, այլ կերպ ասած՝ ուրիշներին չպարտադրել սեփական կամքը: Ըստ դասական մտածողության՝ այս արտահայտությունը նշանակում է, որ կառավարիչը պետք է հարզի կառավարվողների (ժողովրդի) բնական պայմանները: Նա չպիտի չափից դուրս միջամտի նրանց կյանքին, բույլ տա հետևել սեփական ցանկություններին ու ինքնուրույն կայանալ: «Չ-գործության» միջոցով հնարավոր է հասնել ամեն ինչի: Կարևորն այն է, որ «Դան գործի բնական ճանապարհով»: Կոնֆուցիական մտածողության մեջ «չ-գործություն» նշանակում է, որ կառավարիչն իշխում է ենթականներին նրանց վրա ազդելով սեփական բարոյական օրինակով և ձեռքբերումներով, և ոչ թե հրամանագրերի, հարկադրանքի ու պատիժների միջոցով, որպեսզի մարդիկ ապրեն ու գործեն առանց հարկադրանքի, և հաստատվի հասարակական ներդաշնակություն: Հիմնական գաղափարը շատ մոտ է «նարդկանց սովորեցնել հիմնական իդեալներն ու սկզբունքները և նրանց մոնիկ բարության՝ ներդաշնակ հասարակական կարգ հաստատելու համար» հայցակերպին: Բայց կոնֆուցիական և դասական մտքի դպրոցները նախընտրում են կառավարել՝ հարզելով մարդկանց ու հասարակության ներհատուկ բնույթը և ոչ թե չափազանց միջամտության կամ պարտադրանքի միջոցով:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Մեջբերումներ

Դառն միշտ ամեն ինչ հնարավոր է դարձնում չմիջամտելու միջոցով: Միջամտելու դեպքում ոչնչի հնարավոր չէ հասնել: Եթե կառավարիչը խասորեն հետևի այս օրենքին, բռնոր երևույթներն ու արարածները կզարգանան միայն իրենց հատուկ ձևով: («*Lwingqh*»)

Կոնֆուցիոն ասում էր. «Ո՞վ էր չ-գործությամբ առաջնորդվող լավագույն կառավարիչը: Թերևս Շունը: Եվ ի՞նչ էր անում նա: Ուրակի հանդիսավոր նստում էր իր կայսերական զահին» («*Չրույցներ և ասույթներ*»)

ուհուա 物化

Իրերի ձևափոխում

Սա իրերի գոյության այն ձևն է, երբ իրերի միջև սահմանները վերանում են, և մի երևույթը փոխակերպվում է մեկ ուրիշի: «Իրերի ձևափոխում» արտահայտությունը ծագել է «Չուանցիից», որն այս գաղափարը ներկայացրել է «Չուանցին երազում էր թիթեռ դառնալու մասին» առակում: Նա հավատացած էր, որ սեփական անձի ու մյուսների, երազի ու արքնության և առհասարակ բոլոր իրերի/երևույթների միջև սահմանն ու տարբերությունը կարելի է վերացնել: Հետևաբար, որևէ երևույթի ձևափոխումն ուրիշ երևույթի հնարավոր է: Սակայն երբ մարդը կառչում է իր ու ուրիշների տարբերությունից, իրերի ձևափոխում չի լինի: Իսկ եթե հակված է ձևափոխել իրերը, կարող է հայտնվել երազում:

Մեջբերում

Սի անգամ ես՝ Չուան Չոռուն, երազում էի բռչող թիթեռնիկ

դպոնալու մասին, շատ ուրախ էի և անում էի այն, ինչ սիրոս ուզում էր: Մոռացել էի, որ Չուան Չոռուն եմ: Եվ հանկարծ արքնացա, ու նորից դարձա Չուան Չոռուն: Զգիտեի՝ արդյոք Չուան Չոռուն երա՞զ էր տեսնում, թէ իբր թիթեռնիկ է, թէ՞ թիթեռնիկն էր երազում տեսնում, որ Չուան Չոռուն է: Այս երկուսի միջև պետք է որ տարրերություն լինի, որը ես կոչում եմ «իդերի ձևափոխում» («Չուանցի»)

սիկունքի 西昆体

Սիկուն բանաստեղծական ոճը

Այս բանաստեղծական ոճը ձգտում էր հոեստորական գեղեցկության և համաշափ կառուցվածքի: Հյուսիսային Սուն դինաստիայի առաջին տարիներին բանաստեղծներ Յան Յին, Լիոն Յունը և Ցյան Ուեյանը հավաքվում էին կայսեր անձնական գրադարանում «Կարևոր հայելիներ կառավարման համար» գիրքը կազմելու, գիրք, որն արձանագրել է միապետների ու նրանց նախարարների ողջ գործունեությունը բոլոր նախորդ դինաստիաներում: Ազատ ժամանակ նրանք բանաստեղծություններ էին գրում միմյանց համար: Հետագայում նրանք այս բանաստեղծությունները հավաքեցին «Սիկուն բանաստեղծությունների ժողովածուում»: (Սիկունը իին չինական լեզենդում մի վայր էր, որտեղ ենթադրաբար հավաքվում էին կայսրերի գրքերը, և հետևաբար, սա նաև բանաստեղծությունների ժողովածուի վերնագիրն էր): Սիկուն ոճի բանաստեղծները ներշնչանք էին ստանում Լի Շանինից, որը բժախնդիր էր ակնարկների գործածության առումով, և որի բանաստեղծությունները նուրբ գրավչություն ունեին: Այս բանաստեղծները փառարանում էին տաղաչափական օրենքներն ու մետոնիշիան: Նրանց ստեղծագործություններն աշքի էին ընկնում նուրբ ոճով, խիստ ոփրամիկ

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

էին ու զուգահեռ և ազատ էին Թան դինաստիայի ուշ շրջանի, ինչպես նաև դրան հաջորդող Հինգ դինաստիաների և Տասը նահանգների ժամանակաշրջանի բանաստեղծական ոճից, որը բնութագրվում էր անկենդասն ու մակերեսային ոճով: Սիկուն ոճի պոեզիան զգալի ազդեցություն թողեց հետագա ժամանակաշրջանի պոեզիայի ոճի վրա: Սակայն, այս բանաստեղծությունները, որոնք գրվել էին հանպատրաստից, միմյանց արձագանքելու նպատակով, չափազանց հղված էին, զուրկ անկեղծ զգացմունքներից, և հետագա շրջանի քննադատները չէին հավանում նրանց ունայնությունը:

Մեջքերում

Յան Յին և Լիու Յունը բանաստեղծություններ էին գրում միմյանց համար, և «Սիկուն ոճի բանաստեղծությունների ժողովածուն» մեծ մասսակայանություն էր վայելում: Հետագա շրջանների բանաստեղծները նմանակում էին այս ոճը՝ այդպիսով ձևափոխելով բանաստեղծական ոճը: Եվ այսպես էլ ի հայտ եկավ պոեզիայի նոր ձևը, որը հայտնի էր «Սիկուն ոճ» անունով: Այդ ժամանակից ի վեր մոռացվեցին Թան շրջանի բանաստեղծների բոլոր ժողովածուները: (Օույան Սիու. «*Օույան Սիուի՝ պոեզիայի քննադադությունն»)*)

Այանյուան ֆանտազիա

Կեղծավոր (փարիսեցի)

Կեղծավորն այն մարդն է, որը ձգտում է խարդախ ճանապարհներով հեղինակություն հաստատել: Կեղծավորներն իրենց պահում են բարոյական սկզբունքների համաձայն, որպեսզի արժանանան համընդիանուր գովասանքի, մինչ-

դեռ իրականում պատրաստ են վոխչիջման գնալ սկզբունքների ու ազնվության հարցում, փորձելով տպավորություն գործել և համաձայնության գալով անազնիվ մարդկանց հետ: Առաջին հայացքից թվում է՝ կեղծավորները գերազանց, առաքինի մարդիկ են, բայց դա չի համապատասխանում իրականությանը: Նրանց պահվածքը հաճախ մոլորության մեջ է գցում մարդկանց, ինչը լուրջ սպառնալիք է հասարակության բարոյական նկարագրին:

Մեջքերումներ

Կոնֆուցիոսն ասում էր, «Կեղծավորը բարոյական այլասերված երևույթ է»: (*«Չրույցներ և ասույթներ»*)

Նրանք, որ հաճոյանում են աշխարհին, բայց ներքուստուն բաքնված մտադրություններ, կեղծավորներ են: (*Սինցիոս*)

Այսուհետեւ

Որդիական բարեպաշտություն

Որդիական (որդու և դստեր) բարեպաշտությունը ենթադրում է հնագանդություն ծնողներին, հարգանք ու սեր նրանց հանդեպ: Իսկ դրա համար պետք է հետևել հետևյալ կանոններին, առաջին, ուշադիր լինել սեփական մարմնի հանդեպ, որին լույս աշխարհ են բերել ծնողները, խուսափել վնասվածքներից ու իիվանդություններից՝ ծնողներին ազատելով ավելորդ անհանգստությունից: Երկրորդ, միշտ հետևել ծնողների խրատներին, խորհուրդներին ու խնդրանքներին, հնագանդվել նրանց, նույնիսկ եթե համաձայն չեք նրանց հետ: Երրորդ, ձեռք բերել փառք ու կայանալ բարոյական ազնվությամբ՝ կարևորելով նրանց խրատներն ու խորհուրդ-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

Աերը: Որդիական բարեպաշտության արմատները ծնողների հանդեպ երեխաների սիրո ու հարգանքի մեջ են: Կոնֆուցիականները հավատացած էին, որ բարեպաշտությունը մարդու բարոյական շիտակության հիմքն է, ծնող-երեխա և նոյնական մասին պահպանը պահպանման ամրացման գրավականը:

Մեջքերումներ

Ցիյոնն հարցրեց Կոնֆուցիոսին որդիական բարեպաշտության մասին, ու Կոնֆուցիոսը պատասխանեց. «Որդիական բարեպաշտությունը մեր օրերում նշանակում է հոգ տանել ծնողների մասին: Բայց հոգ տանել կարելի է նոյնիսկ շների ու ձիերի մասին: Եթե չկա հարգանք, ի՞նչ տարբերություն, թե ում ես խնամում՝ ծնողների՞ն, թե՞ շներին ու ձիերին»: («Չրուցնիր և ասույթնիր»)

Որդիական բարեպաշտությունը սկսվում է ծնողներին ծառայելուց: Ապա հասնում է միապետին ծառայելուն: Եվ եզրափակվում է վարքագծի կանոնների համաձայն ապրելով: («Որդիական բարեպաշտության դասական օրինակներ»)

սինջայ 心齋

Մտքի մաքուր վիճակ

Եզրույթը նշանակում է մտքի մի այնպիսի վիճակ, որն ամբողջությամբ դատարկ է: Բառն ի հայտ է եկել «Զուանցի» գործից, որտեղ Կոնֆուցիոսը եզրույթի իմաստը բացատրում է Յան Հույին: Զուանցին հավատում էր, որ մարդու ականջներն ու սիրտը տարբերում են սեփական եսը մյուսներից, տարբերակում են ճիշտն ու սխալը, իսկ ցի՞ն (՝ կենսական ուժ)՝ անձն ու դատարկ, զոյություն ունի ամեն ինչի մեջ և չի

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

հակառակում որևէ բանի: Հետևաբար, մարդու միտքը պետք է լինի դատարկ, ինչպես ցին, երբ այն շփման մեջ է մտնում արտաքին իրերի հետ, որպեսզի շտարբերվի ու չքախվի նրանց հետ: Երբ մարդու միտքը բափառում է ֆիզիկական իրերից անդին՝ ազատագրվելով այլ իրերի / երևոյթների սահմաններից ու ազդեցությունից, պահպանում է այն վիճակը, որը կոչում ենք «մտքի մաքուր վիճակ»:

Մեջքերում

Յան Հույն ասում է. «Կարո՞ղ եմ հարցնել՝ ինչ է նշանակում «մտքի մաքուր վիճակ»: Եվ Կոնֆուցիոն պատասխանում է. «Պետք է ամբողջությամբ կենտրոնանանալ: Կարիք չկա լսել ականջներով: Պետք է լսել մտքով: Նույնիսկ կարիք չկա մտքով լսել: Պետք է լսել ցի-ով: Լսածը կանգ է առնում ականջներում: Իսկ միտքը հասնում է միայն այնտեղ, որտեղ նրան հարմար է: Ցին դատարկ է ու հարմարվում է բոլոր արտաքին իրերին: Միայն Դառն է հավաքվում դատարկության մեջ, իսկ դատարկությունն ու խաղաղությունն առաջ են բերում մտքի մաքուր վիճակ»: (*«Չուսնից»*)

սին ձի յոռու չի 行己有耻

Վարվել ամոքի զգացումով

Եզրույթը «Չրույցներ և ասույթներից» է: Կոնֆուցիոնի կարծիքով՝ բարոյական վարքագծի զարգացումը ոչ միայն հասարակական նորմերին համապատասխան խոսքերն ու արարքներն են, այլ, ինչն ավելի կարևոր է, ամոքի զգացումը ներքին հակասությունների և բարոյական վարքագծի խախտումների դեպքում: Ավելին, ամոքի զգացումը մարդուն ստիպում է շտկել ու կատարելազործել սեփական վարքագի-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ծը՝ այն համապատասխանեցնելով բարոյական և հասարակական նորմերին: Ամոքի զգացումը կոնֆուցիական ուսմունքի կարևոր նպատակներից է:

Մեջքերումներ

Ցիգունը հարցնում է. «Ի՞նչ որակների շնորհիվ մարդուն կարելի է կոչել շի (շի ասելով նկատի է առնվում հասարակության այն շերտը, որն ընկած է ազնվականության և հասարակ ժողովոյի միջև): Կոնֆուցիոն ասում էր. «Նա, ով առաջնորդվում է ամոքի զգացումով ու հարգում է միապետի կողմից իրեն վստահված առաջարրանքը, կարող է կոչվել շի»: («Չրույցներ և ասույթներ»)

Կոնֆուցիոն ասում է. «Եթե մարդիկ առաջնորդվում են կառավարական իրամանագրով, և պատիժների միջոցով նրանց ստիպում են ճիշտ վարվելակերպ դրսուրել, նրանք կխուսափեն պատժից, բայց զորք կլինեն ամոքի զգացումից: Եթե նրանք առաջնորդվում են բարոյականությամբ և շարժվում հասարակական նորմերի համաձայն, կունենան ամոքի զգացում ու կիետնեն օրենքներին: («Չրույցներ և ասույթներ»)

սինէ 性惡

Մարդկային էությունը չար է

Այս տեսակետն առաջարկել է Սունցին: Ըստ նրա՝ մարդկային էությունը, որը ենթադրում է բնությունից մարդուն տրված քաղաքավարության կանոններ, ներառում է ինչպես ֆիզիկական կյանքը, այնպես էլ զանազան ցանկություններ և ընկալումներ: Եթե մարդուն թույլ տաս հետևել ցանկություններին միայն արտաքին իրերի հանդեպ, ինչը ներհատուկ է

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

մարդկային էությանը, սա կիանգեցնի հակառապությունների, և հասարակությունը կհայտնվի քառային վիճակում: Բարոյական վարքութարքը, որը կենսական նշանակություն ունի հասարակության մեջ կարգուկանոն պահպանելու համար, չի առաջանում մարդկային էությունից: Ավելին, այն ձեռք է բերվում ջանքերի լարման միջոցով:

Մեջքերումներ.

Մարդկային էությունը չար է, իսկ բարությունը ձեռքբերովի է: (*«Uniligh»*)

Քանի որ մարդկային էությունը չար է, այն պետք է շտկել բարոյական ուսմունքով: Մարդկային էությունը կարող է կառավարվել միայն ծեսերով ու արդարամտությամբ: (*«Unilag»*)

սինշան 性善

Մարդկային էությունը բարի է

